#EU4Youth

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ

ՁԵՌՆԱՐԿ

«Երիտասարդների մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներին» ձեռնարկը նպատակ ունի բարձրացնել երիտասարդների մասնակցության մակարդակը քաղաքացիական և համայնքային որոշումների կայացման գործընթացներում: Այն կիրառելի է ինչպես երիտասարդների, երիտասարդական աշխատողների, դասընթացավարների, հասարակական կազմակերպությունների, համայնքային իշխանության ներկայացուցիչների, այնպես էլ՝ երիտասարդության հարցերով հետաքրքրված այլ շահագրգիռ անձանց կողմից:

Սույն հրատարակությունը պատրաստվել է «Միավորող կամուրջ» սոցիալական ՀԿ-ի կողմից «Երիտասարդների Ձայնը» ծրագրի շրջանակներում՝ Գերմանիայի կառավարության և Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ՝ «Քաղաքացիական հասարակության հզորացում Արևելյան գործընկերության երկրներում» ծրագրի ներքո գործող «ԵՄ-ն հանուն երիտասարդների. Երիտասարդների ներգրավում և հզորացում» ծրագրի շրջանակներում: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում հեղինակը և պարտադիր չէ, որ այն արտահայտի Գերմանիայի կառավարության կամ Եվրոպական միության տեսակետները:

© - 2025 – «Միավորող կամուրջ» սոցիալական ՀԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ի՞ՆՉ Է ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ....4

Մասնակցության հնարավոր օգուտները 6

Մասնակցության ձևերը և մակարդակները 8

Մասնակցության մոդելները....11

Արդյունավետ մասնակցությանը նպաստող գործոնները....15

2. ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁԵՐԸ ՄԻ ՔԱՆԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ....18

3. ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՀՀ-ՈՒՄ 29

Երիտասարդների մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներին. *Պետական մակարդակ* 30

Երիտասարդների մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներին. *Տեղական մակարդակ* 33

Հանրային քննարկումներ և բաց լսումներ 38

Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմիններ 39

Համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնություն 42

Մասնակցային բյուջետավորում 44

4. ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ 48

ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ 65

1. Ի՞ՆՉ Է ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Մասնակցությունը գործընթաց է, որի միջոցով անհատները կամ խմբերը ներգրավվում են տեղական, ազգային կամ միջազգային մակարդակում որոշումների կայացման, կառավարման, հասարակական, քաղաքական կամ տնտեսական գործընթացներում՝ ազդեցություն և ներգործություն ունենալով դրանց արդյունքների վրա: Այն կարող է արտահայտվել տարբեր ձևերով՝ սկսած քաղաքացիական ակտիվությունից մինչև քաղաքական ներգրավվածություն:

«Երիտասարդ» հասկացության տարիքային միջակայքի վերաբերյալ միասնական սահմանում չկա: Օրինակ՝ ՄԱԿ-ը, Համաշխարհային բանկը երիտասարդների տարիքային շեմը սահմանում են 15-24-ը[1], իսկ ԱՊՀ երկրներում երիտասարդների վերաբերյալ վերլուծություններ իրականացնելիս նշվում է 15-29[2] տարեկան անձանց շրջանակը: Վերջերս ընդունված «Երիտասարդական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի համաձայն, երիտասարդ են համարվում 13-35 տարեկան ՀՀ քաղաքացի և ՀՀ քաղաքացիություն չունեցող և ռեզիդենտ հանդիսացող անձինք:



[1] https://www.un.org/esa/socdev/documents/youth/fact-sheets/youth-definition.pdf, https://documents1.worldbank.org/curated/en/705901468104055202/pdf/358520ECA0Youth0Rome1report01PUBLIC1.pdf

[2] The Situation of Youth in the Commonwealth of Independent States (CIS) Countries (Analytical review), Moscow 2024, p. 5

Երիտասարդների ակտիվ ներգրավվումը որոշումների կայացման գործընթացում կարևոր է ավելի ժողովրդավար և ներառական հասարակություն կերտելու գործում: Այն կարող է արտահայտվել երկխոսության, որոշումների կայացման գործընթացի բոլոր փուլերում՝ սկսած պլանավորումից մինչև իրականացում, մշտադիտարկում և գնահատում:[3]

Ժամանակակից պայմաններում հանրային որոշումների կայացման գործընթացին մասնակցություն ունենալը չի սահմանափակվում միայն ընտրությունների ժամանակ որպես ընտրող կամ թեկնածու հանդես գալով: Մասնակցությունն ու ակտիվ քաղաքացիությունը նշանակում են ունենալ իրավունք, միջոցներ, տարածք, հնարավորություն և աջակցություն որոշումների կայացման գործընթացին իրական մասնակցություն ունենալու տեսանկյունից՝ ի նպաստ ավելի լավ հասարակության կերտման:[4]

Մասնակցելու իրավունքը հաստատում է այն իրողությունը, որ հանրային կառավարման մեջ յուրաքանչյուր բնակիչ ունի ձայնի իրավունք, և կառավարման մարմինների (կենտրոնական կամ տեղական) պարտավորությունն է ստեղծել բնակիչներին տեղեկացնելու, կրթելու, հանրային պլանավորման և որոշումների կայացման ու իրականացման տարաբնույթ գործընթացներում ներգրավելու հնարավորություն:[5]

[3] Model of youth participation, UNICEF, Ministry of Youth and Sports Ukraine, 2019

[4] Preamble of the Revised European Charter on the Participation of Young People in Local and Regional Life, Congress of Local and Regional Authorities of the Council of Europe, May 2003

[5] Թումանյան Դ., Շահբազյան Վ., «Մասնակցային ժողովրդավարությունը տեղական մակարդակում. ինչու և ինչպես մասնակցել տեղական ինքնակառավարմանը» ձեռնարկ, Երևան, Նոյյան Տապան, 2011թ., էջ 39

Մասնակցության հնարավոր օգուտները

Երիտասարդները հասարակության կարևոր դերակատարներն են, և վերջինների ներգրավումը որոշումների կայացման գործընթացներում մի շարք դրական փոփոխություններ և օգուտներ կարող է տալ հասարակությանը, մասնավորապես,

- Ժողովրդավարության մակարդակի ամրապնդում
- Քաղաքացիական ակտիվության խթանում
- Արդյունավետ որոշումների կայացում
- Սոցիալական արդարության ապահովում
- Տեղական ինքնակառավարման համակարգի զարգացում

Ժողովրդավարության մակարդակի ամրապնդում: Երիտասարդների ակտիվ մասնակցությունը նպաստում է ժողովրդավարական ինստիտուտների կայացմանը: Երիտասարդների ներգրավվածությունը ձևավորում է պատասխանատու քաղաքացիներ, ովքեր տեղյակ են իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ: Հասարակական վերահսկողության մեխանիզմների ակտիվացումը բարձրացնում է կառավարման մարմինների հաշվետվողականության և թափանցիկության մակարդակը:

Քաղաքացիական ակտիվության խթանում. Արդյունավետ մասնակցության արդյունքում երիտասարդները, տեսնելով, որ իրենց ձայնը կարող է որոշիչ լինել, էլ ավելի ակտիվ կերպով են սկսում մասնակցել հանրային կյանքի տարբեր բնագավառներում:

Հաջողված փորձը լինում է վարակիչ՝ նպաստելով հասարակության շրջանում մասնակցային մշակույթի ձևավորմանը:



Որոշումների կայացման որակի բարելավում. Երիտասարդների ներգրավումը հնարավորություն է ընձեռում նոր գաղափարներ, առաջադեմ մոտեցումներ և լուծումներ կիրառել որոշումների կայացման գործընթացների ժամանակ: Թվային տեխնոլոգիաների, սոցիալական մեդիայի, մասնակցության առցանց գործիքների կիրառումը մեծացնում է որոշումների կայացման արդյունավետությունը՝ դարձնելով դրանք առավել հասցեական և երիտասարդների կարիքներին համահունչ:

Սոցիալական արդարության ապահովում. Երիտասարդների մասնակցությունը ապահովում է հասարակության բոլոր խավերի և շերտերի՝ ներառյալ՝ կանանց, տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների և այլոց, իրավունքների պաշտպանությունը և քաղաքականության մշակման գործընթացներում հավասար ձայների հնարավորությունը: Երիտասարդները կարող են կամուրջի դեր կատարել տարբեր սերունդների միջև՝ ապահովելով կայացված որոշումների ներառականությունն ու արդարացիությունը:

Տեղական ինքնակառավարման համակարգի զարգացում. Տեղական մակարդակում երիտասարդների ներգրավվածությունը նպաստում է համայնքների կայուն զարգացմանը: Համայնքային ֆորմալ և ոչ ֆորմալ խմբերի, քաղաքացիական հասարակության, տեղական ԶԼՄ-ների ներկայացուցիչների, ակտիվ բնակիչների ներգրավումը համայնքի կառավարման աշխատանքների ժամանակ օգնում է բարելավել տեղական նշանակության խնդիրների վերհանման և դրանց արագ, արդյունավետ ու հասցեական լուծումներ գտնելու գործընթացը:

Մասնակցության ձևերը և մակարդակները

Երիտասարդների մասնակցությունը կարող է իրականացվել երկու ձևերով՝ ակտիվ և պասիվ:[6]

Պասիվ մասնակցությունը ենթադրում է տեղեկացված լինել կատարվող ծրագրերի, գործողությունների վերաբերյալ, սակայն չցանկանալ որևէ ներգործություն կամ ազդեցություն ունենալ որոշումների կայացման գործընթացներին:

Ակտիվ մասնակցությունը ենթադրում է որոշակի առաջարկություններ ներկայացնել քննարկվող հարցերի վերաբերյալ և ներգրավված լինել որոշումների կայացման գործընթացներում:

Եթե մասնակցության պասիվ եղանակի դեպքում առկա է տեղեկատվության միակողմանի հոսք՝ պետական կառավարման (նաև՝ տեղական ինքնակառավարման) մարմինների կողմից բնակիչների իրազեկման տեսքով, ապա ակտիվ եղանակի պարագայում գոյություն ունի երկկողմանի ազդեցություն, ապահովվում է դրա հետադարձ շարժը՝ բնակիչների շրջանում հարցումների, քննարկումների և խորհրդակցությունների կազմակերպման, բնակիչների կողմից ձևավորված ֆոկուս խմբերի արձագանքի ուսումնասիրման և այլ ձևերով՝ հնարավորություն ընձեռելով պաշտոնյաներին ստանալու բնակիչների կարծիքն ու դիրքորոշումն իրենց գործունեության վերաբերյալ, հաշվի առնել ստացված առաջարկություններն ու կատարել որոշ շտկումներ իրենց գործողություններում:

[6] UNICEF Youth Advocacy Guide, 2022, p. 7

Երիտասարդների մասնակցության մակարդակներն են՝



1. **Տեղեկացում**. երիտասարդները տեղեկացվում են սպասվելիք ծրագրերի իրագործման, որոշումների կայացման, քաղաքականությունների մշակման վերաբերյալ, սակայն նրանցից չի ակնկալվում համապատասխան արձագանք, առաջարկությունների ներկայացում կամ էլ ներգրավվածություն վերոնշյալ գործընթացներում:
2. **Խորհրդակցում.** երիտասարդները հնարավորություն ունեն արտահայտելու իրենց կարծիքը, առաջարկությունները և դիրքորոշումները, սակայն դրանք, հնարավոր է, ազդեցություն չունենան վերջնական որոշումների վրա:
3. **Համագործակցություն.** որոշումների կայացման գործընթացն իրականանում է երիտասարդների հետ համատեղ քննարկումների արդյունքում:
4. **Որոշումների կայացում.** երիտասարդներն իրենք են նախաձեռնում, պլանավորում և իրականացնում որոշակի ծրագրեր, մշակում քաղաքականություններ՝ ունենալով որոշումների կայացման լիարժեք հնարավորություն և վերահսկողական գործառույթներ:

Մասնակցության մակարդակների և ձևերի կապն ու առանձնահատկությունները

Մակարդակները	Ձևերը	Հաղորդակ-ցության ձևերը	Հանրային ազդեցությունը	Իրականացման ձևերը	Իրականացման գործիքները
Տեղեկացում	Պասիվ	Միակողմանի	Չկա	Տեղեկության փոխանցում	ԶԼՄ-ներ
Խորհրդակցում	Ակտիվ	Երկկողմանի	Սահմանափակ	Բնակչության կարծիքի բացահայտում	Հարցումներ, ֆոկուս-խմբային քննարկումներ, հարցազրույցներ հանրային քննարկումներ/ժողովներ
Համագործակցու-թյուն	Ակտիվ	Երկխոսության վրա հիմնված	Միջին	Որոշումների համատեղ կայացում	Կամավորական ծրագրեր, բնակիչների նախաձեռնություն, մասնակցային բյուջետավորում
Որոշումների կայացում	Ակտիվ	Երկխոսության վրա հիմնված	Բարձր	Որոշումների կայացում բնակիչների կողմից	Ընտրություններ, հանրաքվեներ, համայնքային հանձնաժողովներ

Մասնակցության մոդելները

Ռոջեր Հարթի «Մասնակցության սանդուղք» մոդելը (1992թ.)[7]

Սոցիոլոգ Ռոջեր Հարթի կողմից մշակված երեխաների և երիտասարդների «մասնակցության սանդուղքը» ցույց է տալիս, թե ինչպես են մասնակցության մակարդակները փոխվում՝ «չմասնակցությունից» (թվացյալ մասնակցություն) դառնալով մինչև իրական ներգրավվածություն: Այն կարևորում է իմաստալից ներգրավվածությունը, ինչի շնորհիվ երիտասարդները հնարավորություն են ստանում զարգացնել իրենց քաղաքացիական գիտակցության մակարդակը:



8 ***Մասնակցություն երիտասարդների նախաձեռնությամբ***. երիտասարդները իրենք են նախաձեռնում, իրականացնում և վերահսկում ծրագրերը և հանդես են գալիս մեծահասակների հետ համագործակցելու առաջարկություններով:

7 ***Երիտասարդների նախաձեռնություն՝ մեծահասակների աջակցությամբ.*** երիտասարդներն են նախաձեռնում ծրագրերը, կայացնում որոշումները, իսկ մեծահասակները պարզապես հանդես են գալիս օգնողների դերում:

6 ***Երիտասարդների մասնակցություն մեծահասակների նախաձեռնությանը.*** ծրագրերի նախաձեռնողները հանդիսանում են մեծահասակները, սակայն երիտասարդները համատեղ որոշումներ կայացնելու հնարավորությամբ են օժտված:

5 ***Երիտասարդներին տեղեկացում և խորհրդի հայցում.*** Երիտասարդների կարծիքը ավելի մեծ կշիռ ունի, նրանք ունեն համապատասխան հանձնաժողովներում ձայնի իրավունք, սակայն վերջնական որոշումը կայացնում են մեծահասակները:

4 ***Հանձնարարում՝ նախապես տեղեկացնելով.*** Երիտասարդներն ունեն կարծիքների բարձրաձայնման և առաջարկությունների ներկայացման հնարավորություններ, բայց նրանք որոշումների վրա մեծ ազդեցություն չունեն:

3 ***Տոկենիզմ.*** Երիտասարդները ձևական կերպով օժտված են ձայնի իրավունքով, սակայն որոշումների կայացման գործընթացի ժամանակ ազդեցության լծակների հնարավորություններ չունեն:

2 ***Զարդարանք.*** երիտասարդները մասնակցում են որևէ միջոցառման՝ «ցուցադրական» կերպով՝ առանց իրենց իրական ներգրավվածության պատճառները հասկանալու:

1 ***Մանիպուլյացիա.*** Երիտասարդները կատարում են մեծահասակների հանձնարարությունները՝ չհասկանալով դրանց իրական էությունն ու նպատակը:

[7] Roger Hart (1992): Children's participation: from tokenism to citizenship. Essay for UNICEF (Innocenti Essay N° 4)

Սառա Ուայթ-ի «Մասնակցության շահերի» մոդելը (1996թ.)[8]

Սառա Ուայթի «Մասնակցության շահերի մոդելը» հնարավորություն է տալիս պարզելու, թե ով է վերահսկում մասնակցության գործընթացը և ինչ նպատակով է այն իրականացվում:

Մասնակցության ձևը	Վերևից ներքև (զարգացման ծրագրեր մշակող կառույցների շահերը)	Ներքևից վերև (մասնակիցների տեսակետներն ու ակնկալիքներն իրենց մասնակցությունից)	Գործողությունը (մասնակցության արդյունքները)
Անվանական (պասիվ) Երիտասարդների ներգրավվածությունը ձևական է՝ պարզապես ներկայություն ապահովելու համար, իսկ որոշումները կայացնում են այլ անձինք: Օրինակ՝ համայնքում ստեղծվում են երիտասարդական ակտիվ խմբեր, խորհրդակցական մարմիններ, սակայն դրանք իրականում գործունեություն չեն ծավալում:	***Օրինականացում*** Իրականացվում է կառույցի օրինականությունը բարձրացնելու նպատակով, համարվում է «թվացյալ մասնակցային»:	***Ներառականություն*** Երիտասարդները ցանկանում են որոշումների կայացման գործընթացի մասը դառնալ, սակայն դա նրանց մոտ չի հաջողվում:	***Ցուցադրություն*** Մասնակցությունը ձևական կերպով է տեղի ունենում:
Գործիքային (խորհրդանշական) Երիտասարդները ներգրավվում են որոշակի առաջադրանքների կատարման աշխատանքներում, բայց առանց որոշումների վրա ազդեցության լծակների: Օրինակ՝ «Երիտասարդական զարգացման ծրագրերը», երբ երիտասարդները որոշակի աշխատանքներ են իրականացնում, սակայն վերջինների առաջարկությունները հաշվի չեն առնվում:	***Արդյունավորություն*** Ապահովում է արդյունավետություն և ծախսերի նվազեցում՝ վճարովի աշխատուժի փոխարեն օգտագործելով համայնքային կամավորական աշխատանքը:	***Ծախս*** Երիտասարդների համար մասնակցությունը պատճառ է հանդիսանում որոշակի այլընտրանքային ծախսերի առաջացման՝ կապված իրենց կրթության և աշխատանքի հետ:	***Միջոց*** Մասնակցությունը նպատակին հասնելու միջոց է, որը ոչ միշտ է օգուտ բերում երիտասարդներին:

[8] Sarah White (1996): Depoliticising development: the uses and abuses of participation. Development in Practice. Vol. 6.

Ներկայացուցչական (գործընկերային) Երիտասարդները գործընկերային հարաբերությունների մեջ են գտնվում կառավարման (պետական և տեղական) մարմինների հետ և ունեն որոշումների կայացման գործընթացին իրական մասնակցություն: Օրինակ՝ համայնքի բյուջեի կազմման աշխատանքներում երիտասարդները որոշակի առաջարկություններով են հանդես գալիս:	***Կայունություն*** Երիտասարդների ներգրավվածությունն ապահովում է պլանավորման գործընթացի ճկունությունն ու ներառականությունը	***Ազդեցություն*** Երիտասարդները ցանկանում են օգտագործել իրենց առաջարկությունները ծրագրերի պլանավորման գործընթացի ժամանակ:	***Ձայն*** Մասնակցությունը հնարավորություն է տալիս ձայնը լսելի դարձնել:
Փոխակերպող (նախաձեռնողական) Երիտասարդներն ինքնուրույն որոշումներ կայացնելու հնարավորություն ունեն: Օրինակ՝ երիտասարդների կողմից մեկնարկած քաղաքացիական նախաձեռնության արդյունքում որոշակի խնդիրներ լուծում են ստանում:	***Հզորացում*** Կառույցի նպատակը երիտասարդների հզորացումն է:	***Հզորացում*** Երիտասարդները գիտակցում են իրենց դերն ու կարևորությունը որոշումների կայացման գործընթացի ժամանակ:	***Միջոց*** Մասնակցությունը երիտասարդների հզորացման միջոց է, որի շնորհիվ վերջինները իրական հնարավորություն են ունենում բարելավելու համայնքային ծառայությունները:

Սքոթ Դեյվիդսոնի «Մասնակցության անիվ» մոդելը (1998թ.)[9]

Սքոթ Դեյվիդսոնը Շոտլանդիայի Հարավային Լանարկշիր համայնքի համար մշակել է «մասնակցության անիվ», որը հնարավորություն է տալիս սահմանելու համայնքային պլանավորման և զարգացման աշխատանքներում բնակիչների մասնակցության մակարդակները: Այն հնարավորություն է տալիս հստակեցնել մասնակցության ձևերը և շահագրգիռ կողմերին (համայնքապետարանի ներկայացուցիչների և համայնքի բնակիչներ) հասկանալ, թե տարբեր իրավիճակներում մասնակցության որ մակարդակն է անհրաժեշտ կիրառել:

[9] Scott Davidson (1998): Spinning the wheel of empowerment. In: Planning. Vol. 1262.

Արդյունավետ մասնակցությանը նպաստող գործոնները

Երիտասարդների **իմաստալից և արդյունավետ մասնակցությունը** հնարավոր է միայն այն դեպքում, երբ առկա են համապատասխան պայմաններ, և մասնակցային գործընթացում ներգրավված բոլոր դերակատարները պատասխանատու են այդ պայմանների ապահովման համար:

Միջազգային պրակտիկայում կիրառվում է RMSOS մոդելը[10] (Right, Means, Space, Opportunity, Support), որը հանդիսանում է երիտասարդների մասնակցության կարևոր կառուցակարգերից մեկը և օգնում է հասկանալ, թե որ պայմանների առկայության դեպքում է հնարավոր լիարժեք և արդյունավետ մասնակցություն ունենալ որոշումների կայացման գործընթացներին: Մոդելի բաղադրիչներն են՝



[10] "Have your say!" Manual on the Revised European Charter on the Participation of Young People in Local and Regional Life, Council of Europe Publishing, 2015, pp. 38-43

Իրավունք. Հանրային կյանքում որոշումների կայացման գործընթացներում բնակիչների մասնակցությունը հանդիսանում է մարդու իրավունքներից մեկը: Իզուր չէ, որ օրինակ միջազգային շատ փաստաթղթեր «մասնակցությունը» դասում են մարդու հիմնարար իրավունքների շարքին[11]: Ռոջեր Հարթը նշում է, որ մասնակցությունը քաղաքացիության հիմնարար իրավունք է, քանի որ այն հնարավորություն է տալիս սովորելու և հասկանալու, թե ինչ է նշանակում լինել քաղաքացի: Եվրոպայի խորհրդի անդամ երկրների շրջանակում երիտասարդների մասնակցությունը դիտարկվում է որպես «երիտասարդների իրավունք տեղական մակարդակում ներգրավվելու, պարտականություններ ստանձնելու և որոշակի ազդեցություն ունենալու իրենց առօրյա կյանքի գործընթացների վրա»:[12] Այս համատեքստում կարևորվում է բոլոր երիտասարդների՝ վերոնշյալ իրավունքի իրացման հնարավորության ապահովումը՝ բացառելով խտրականության ցանկացած տիպի դրսևորում:

Միջոցներ. Որպեսզի երիտասարդներն իրենց մասնակցության իրավունքն արդյունավետ իրացնելու հնարավորություն ունենան, պետք է օժտված լինեն ֆինանսական բավարար միջոցներով, ունենան համապատասխան զբաղվածություն: Փորձը ցույց է տալիս, որ եթե մարդն ունի օրվա հացը լուծելու խնդիր, բնականաբար, չի ունենա ժամանակ և մոտիվացիա մասնակցելու որոշումների կայացման գործընթացներին: Ուստի երիտասարդների մասնակցությունը խթանելու համար անհրաժեշտ է ապահովել վերջինների հիմնական կարիքների բավարարվածությունը, ինչպիսին են՝ բավարար սոցիալական և առողջապահական ծառայությունները, կրթության, կեցության հնարավորությունները և այլն:

Տարածք. Երիտասարդներին անհրաժեշտ է տրամադրել ֆիզիկական տարածք, որտեղ նրանք կկարողանան հանդիպումներ, քննարկումներ կազմակերպել: Ներկայումս ֆիզիկական տարածքին փոխարինելու է գալիս վիրտուալը, համացանցը դառնում է երիտասարդների կարծիքների փոխանակման, նախագծերի մշակման, ծրագրերի իրականացման հիմնական հարթակը: Սակայն չպետք է վերոնշյալ գործոնը դիտարկել պարզապես ֆիզիկական տարածքի տեսանկյունից: Պետք է ձևավորել նաև անհրաժեշտ

[11] Տե՛ս օրինակ «Երեխաների իրավունքների ՄԱԿ-ի կոնվենցիա»

[12] “Have your say!” Manual on the Revised European Charter on the Participation of Young People in Local and Regional Life, Council of Europe Publishing, 2015, p. 13

միջավայր՝ քաղաքացիական որոշումների կայացման գործընթացին երիտասարդների մասնակցության համար: Սա նշանակում է, որ երիտասարդների տեսակետներն ու առաջարկությունները պետք է իրական ազդեցություն ունենան ընդունվող որոշումների վրա:

Հնարավորություն. երիտասարդները պետք է տեղեկացված լինեն մասնակցության իրենց իրավունքների և հնարավորությունների վերաբերյալ: Շատ հաճախ երիտասարդների պասիվության պատճառը ոչ թե չցանկանալն է, այլ իրենց իրավունքների և հնարավորությունների վերաբերյալ չիմացությունը: Բացի այդ, որոշումների կայացման գործընթացը պետք է լինի մատչելի և հեշտ ընկալելի, որպեսզի ցանկացած երիտասարդ, անկախ կրթությունից և մասնագիտական ունակություններից, հնարավորություն ունենա հեշտությամբ հասկանալ և լիարժեք մասնակցություն ունենալ վերոնշյալ գործընթացին:

Աջակցություն. Որոշումների կայացման գործընթացների ժամանակ երիտասարդները պետք է ստանան ֆինանսական, բարոյական, ինստիտուցիոնալ և այլ տիպի աջակցություն՝ ինչպես անձնական, կազմակերպական, այնպես էլ՝ համայնքային մակարդակներում: Տեղական իշխանության ներկայացուցիչները, հնարավորության դեպքում, պետք է ֆինանսավորեն երիտասարդների կողմից առաջարկված ծրագրերը, երիտասարդական, տեղական ինքնակառավարման ոլորտների փորձագետները պետք է խորհրդատվական աջակցություն տրամադրեն բոլոր ցանկացողներին՝ մշակված ծրագրերն առավել արդյունավետ իրագործելի դարձնելու համար: Բացի այդ, կազմակերպությունները, որտեղ աշխատում կամ անդամակցում են երիտասարդները, ինչպես նաև համայնքը, որտեղ ապրում են վերջինները, պետք է խրախուսեն երիտասարդական մասնակցությունը՝ հասարակության ապագա բարեկեցության ապահովման համար:

Նշենք, որ վերևում ներկայացված բոլոր գործոնները փոխկապված են, գտնվում են փոխազդեցության մեջ և դրանց համաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր մասնակցության գործընթացը դարձնել արդյունավետ:

2. ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁԵՐԸ ՄԻ ՔԱՆԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Երիտասարդների մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներին կարևոր նշանակություն ունի հասարակության զարգացման և ժողովրդավարության ամրապնդման գործում: Ամբողջ աշխարհում մշակվել են տարբեր մոտեցումներ, նախաձեռնություններ և մեթոդաբանություններ՝ խթանելու երիտասարդների ներգրավվածությունը տեղական և պետական մակարդակներում: Այս բաժնում անդրադարձ է կատարվում երիտասարդների մասնակցության միջազգային լավագույն փորձին՝ ընդգծելով հաջողված մոդելները, ինստիտուցիոնալ մեխանիզմները և նորարարական մոտեցումները, որոնք կիրառվել են տարբեր համատեքստերում:

Նորվեգիա: Նորվեգիան համարվում է աշխարհի ամենաժողովրդավարական երկրներից մեկը, որտեղ քաղաքացիական հասարակության ակտիվ ներգրավվածությունն ապահովվում է պետական քաղաքականությունների միջոցով: Երիտասարդների մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներին կարևոր նշանակություն ունի, և դրա հիմնական գործիքներից մեկը **Երիտասարդական խորհուրդների** համակարգն է:

Նորվեգիայում տեղական և ազգային երիտասարդական խորհուրդները (Ungdomsråd)[13] գործում են որպես խորհրդատվական մարմիններ, որոնք հնարավորություն են տալիս երիտասարդներին մասնակցել քաղաքական և սոցիալական հարցերի քննարկմանը: Այս խորհուրդները ձևավորվում են տեղական իշխանությունների հետ համագործակցությամբ, և դրանց անդամներն ընտրվում են համայնքային երիտասարդների կողմից: Խորհուրդները կազմակերպում են սեմինարներ, քննարկումներ և այլ միջոցառումներ՝ բարձրացնելու երիտասարդների իրազեկվածությունը քաղաքացիական

[13] Government of Norway. (2020). Ungdomsråd. Regjeringen.no. https://www.regjeringen.no/no/tema/kommuner-og-regioner/kommunestruktur/Verktoy/lokaldemokrativeilederen/kommunen-og-innbyggerne/ungdomsrad/id2425384/

իրավունքների, պարտականությունների և ժողովրդավարական գործընթացների վերաբերյալ:

Երիտասարդական խորհուրդների ձևավորման ընթացակարգերը և կազմը կարող են տարբերվել համայնքից համայնք, սակայն հիմնականում դրանք ունեն տարիքային սահմանափակումներ: Այսպես, երիտասարդական խորհուրդների անդամակցությունն ունի տարիքային սահմանափակում, և, ինչպես փորձն է ցույց տալիս, դրանց անդամները սովորաբար 13-25 տարեկան երիտասարդներն են լինում: Վերջինները հիմնականում պաշտոնավարում են 1-2 տարիների ընթացքում, ինչը հնարավորություն է տալիս այլ երիտասարդներին անդամակցելու վերոնշյալ խորհուրդներին: Տարբերվում է նաև այդ խորհուրդների անդամների ընտրության կարգը, մասնավորապես՝ անդամները կարող են ընտրվել ինչպես դպրոցներում, երիտասարդական կազմակերպություններում, այնպես էլ՝ համայնքային հանդիպումների ընթացքում կազմակերպված ընտրությունների ժամանակ: Հիմնական գործառույթներից են՝ երիտասարդներին առնչվող հարցերի վերաբերյալ տեղական իշխանություններին խորհրդատվության տրամադրում, երիտասարդների կարիքների ուսումնասիրություն և համապատասխան առաջարկների ներկայացում, հասարակության մեջ երիտասարդների իրավունքների պաշտպանություն, համայնքային ծրագրերի և միջոցառումների նախաձեռնություն ու իրականացում:

Հաջողված օրինակներից կարելի է նշել մի շարք ծրագրեր, ինչպիսիք են «Համատեղ ջանքեր խոցելի երիտասարդության համար»,[14] և «Բարելավված հաղորդակցություն երեխաների և երիտասարդների հետ»[15] ծրագրերը, որոնք կենտրոնանում են երիտասարդների ներգրավվածության և ծառայությունների բարելավման վրա: Այս մոտեցումը թույլ է տալիս երիտասարդներին ավելի լավ հասկանալ հանրային ֆինանսների կառավարման առանձնահատկությունները և ստանձնել որոշումների կայացման պատասխանատվություն:

[14] Oslo Kommune. (2021). Felles innsats for utsatt ungdom (Joint Effort for Vulnerable Youth, 2021-2026. https://www.oslo.kommune.no/fag-og-utviklingsprosjekter/omradesatsingenes-prosjekter/felles-innsats-for-utsatt-ungdom/?utm_source=chatgpt.com#toc-3

[15] Oslo Kommune. (2023). Forbedret kommunikasjon med barn og unge (Improved Communication with Children and Youth) – 2023-2025 https://www.oslo.kommune.no/fag-og-utviklingsprosjekter/omradesatsingenes-prosjekter/forbedret-kommunikasjon-med-barn-og-unge/?utm_source=chatgpt.com

Ֆինլանդիա: Ֆինլանդիան ևս, հայտնի է իր առաջադեմ ժողովրդավարական արժեքներով և կրթական համակարգով, որտեղ երիտասարդների մասնակցությունը քաղաքացիական և հասարակական գործընթացներին կարևոր դերակատարություն ունեն: Երիտասարդների ներգրավվածությունը ապահովվում է տարբեր մեխանիզմներով, որոնք նպաստում են նրանց ակտիվ մասնակցությանը որոշումների կայացման գործընթացներին:

Ֆինլանդիան երկար տարիներ ներդրել է երիտասարդական ներգրավվածության տարբեր մեխանիզմներ, որոնցից ամենակարևորը «Երիտասարդական խորհուրդներն» են (Nuorisovaltuusto):[16] Այս խորհուրդները ստեղծվել են որպես կապող օղակ երիտասարդների և տեղական իշխանությունների միջև: Քաղաքապետարանների մակարդակով գործող խորհուրդները խորհրդատվական գործառույթներ են իրականացնում և առաջարկում են երիտասարդական քաղաքականությունների բարելավման ուղիներ՝ ներկայացնելով երիտասարդների կարծիքները և առաջարկությունները տարբեր հարցերի վերաբերյալ: Երիտասարդները կարող են ուղղակիորեն մասնակցել տեղական քաղաքականության մշակմանը, առկա են պաշտոնապես ամրագրված մեխանիզմներ, որոնց միջոցով նրանք կարող են ներգրավվել որոշումների կայացման գործընթացին, և համայնքներում երիտասարդների առաջարկների հաշվառման համակարգին:

Օրինակ, Հելսինկիի երիտասարդական խորհուրդը (Helsingin Nuorisovaltuusto)[17] Ֆինլանդիայի մայրաքաղաքում գործող ակտիվ կառույց է, որը ներգրավում է երիտասարդներին քաղաքային իշխանության քաղաքականության մեջ: Այն բաղկացած է 30 անդամից, որոնք ընտրվում են քաղաքի տարբեր շրջաններից: Խորհուրդը հանդիպում է պարբերաբար՝ քննարկելու երիտասարդներին վերաբերող հարցեր և ներկայացնելու առաջարկություններ քաղաքային խորհրդին: Հելսինկիի երիտասարդական խորհուրդը նախաձեռնել է մի շարք ծրագրեր, ներառյալ՝ երիտասարդական մշակութային միջոցառումներ, սպորտային մրցումներ և կրթական սեմինարներ:

[16] Nuorisovaltuusto. (2025). https://nuva.fi/mika-on-nuorisovaltuusto/

[17] Helsingin Nuorisovaltuusto. (2025). https://nuorten.hel.fi/osallistu-ja-vaikuta/helsingin-nuorisoneuvosto/

Բացի տեղական խորհուրդներից, Ֆինլանդիայում գործում է նաև երիտասարդական խորհրդարան (ֆիններեն՝ Nuorten Parlamentti)[18], որը ազգային մակարդակում ներկայացնում է երիտասարդների ձայնը: Խորհրդարանը նպատակ ունի բարձրացնել երիտասարդների քաղաքացիական իրազեկվածությունը և խթանել նրանց մասնակցությունը ժողովրդավարական գործընթացներին: Երիտասարդական խորհրդարանի անդամները մշակում և ներկայացնում են առաջարկություններ, որոնք կարող են քննարկվել ազգային խորհրդարանում:

Գերմանիա: Գերմանիան ունի զարգացած ժողովրդավարական համակարգ, որտեղ երիտասարդների մասնակցությունը պետական և տեղական որոշումների կայացման գործընթացներին մեծ կարևորություն ունի: Երիտասարդների ներգրավվածությունը խթանվում է տարբեր մեխանիզմներով, որոնցից կարևորագույնը երիտասարդական խորհրդարաններն ու ուսանողական խորհրդակցական մարմիններն են:

Գերմանիայի երիտասարդական խորհրդարանները (Jugendparlamente)[19] գործում են տարբեր համայնքներում և դաշնային մակարդակում՝ ապահովելով երիտասարդների ձայնի լսելիությունը պետական կառույցներում: Այս կառույցները կազմված են երիտասարդներից, որոնք ընտրվում են կամավոր սկզբունքով, և նրանք հնարավորություն ունեն քննարկելու իրենց համայնքներին վերաբերող հարցեր, առաջարկելու լուծումներ և ներկայացնելու իրենց տեսակետները տեղական իշխանություններին:

Օրինակ, Բեռլինի երիտասարդական խորհրդարանը (Jugendparlament Berlin)[20] ակտիվորեն մասնակցում է քաղաքի բյուջեի բաշխման, կրթական բարեփոխումների և երիտասարդական մշակութային միջոցառումների կազմակերպման գործընթացին: Երիտասարդական խորհրդարանների որոշ անդամներ հետագայում ներգրավվում են քաղաքական գործունեության մեջ՝ շարունակելով իրենց մասնակցությունը պետական կառավարման համակարգում:

---

[18] Nuorten Parlamentti. (2024). https://opinkirjo.fi/toiminta/yhteisollinen-koulu/nuorten-parlamentti/.

[19] Deutsche Bundesjugendring. (2022). https://www.dbjr.de/artikel/jugendparlamente-als-ein-format-der-kommunalen-juge

[20] Kinder- und Jugendparlament (KJP). (2025). https://www.berlin.de/ba-charlottenburg-wilmersdorf/politik/gremien/kinder-und-jugendparlament/

Գերմանիայում գործում է նաև Երիտասարդական խորհուրդը (Bundesjugendkuratorium)[21], որը հանդես է գալիս որպես դաշնային մակարդակով խորհուրդ՝ ուղղված երիտասարդական քաղաքականությունների մշակմանն ու իրականացմանը: Այն աջակցում է երիտասարդների ներգրավվածությանը սոցիալական, տնտեսական և կրթական ոլորտներում՝ խթանելով նրանց ձայնի ազդեցությունը պետական կառավարման ոլորտում:

Կանադա: Կանադան հայտնի է իր բազմամշակութային քաղաքականությամբ և ժողովրդավարական սկզբունքներով, որոնք մեծապես նպաստում են երիտասարդների ակտիվ ներգրավվածությանը քաղաքական և քաղաքացիական գործընթացներում: Կանադայի կառավարությունը մշակում և կիրառում է տարբեր ծրագրեր, որոնք ուղղված են երիտասարդների մասնակցության խթանմանը՝ ընդգրկելով ինչպես ազգային, այնպես էլ տեղական մակարդակները:

Կանադայի ազգային երիտասարդական խորհրդարանը (Canadian Youth Parliament)[22] հանդիսանում է երիտասարդների ներգրավվածության առանցքային հարթակներից մեկը, որը հնարավորություն է տալիս երիտասարդներին ներկայացնելու իրենց տեսակետները և առաջարկները պետական քաղաքականությունների վերաբերյալ: Խորհրդարանը կազմակերպում է տարեկան հանդիպումներ, որտեղ քննարկվում են երիտասարդներին առնչվող հարցեր, ներառյալ կրթությունը, շրջակա միջավայրը, աշխատանքային հնարավորությունները և քաղաքացիական իրավունքները:

Կանադայի տեղական համայնքներում գործում են երիտասարդական խորհուրդներ (Youth Councils), որոնք ուղղակիորեն համագործակցում են քաղաքային իշխանությունների հետ: Օրինակ, Տորոնտոյի երիտասարդական խորհուրդը (Toronto Youth Council)[23] ներգրավում է քաղաքի երիտասարդ բնակիչներին քաղաքային ծրագրերի մշակման գործընթացում, կազմակերպում

[21] Das Bundeskuratorium. (2025). https://bundesjugendkuratorium.de/
[22] Young Canadian's Parliament. (2025). https://childrenfirstcanada.org/campaign/young-canadians-parliament/
[23] Toronto Youth Cabinet. (2025). https://www.thetyc.ca/

հանրային քննարկումներ և միջոցառումներ, ինչպես նաև հանդես գալիս օրենսդրական առաջարկներով:

Կանադայի կառավարությունը նաև աջակցում է երիտասարդների ներգրավվածությանը միջազգային մակարդակում: Մասնավորապես, Կանադայի երիտասարդական պատվիրակները (Canada's Youth Delegates)[24] մասնակցում են ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նիստերին՝ ներկայացնելով Կանադայի երիտասարդների դիրքորոշումները գլոբալ խնդիրների վերաբերյալ:

Վրաստան: Հարևան Վրաստանում գործում է «Վրաստանի Երիտասարդական Խորհուրդը» (Georgian Youth Council), որը նպաստում է երիտասարդների ներգրավմանը տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքներում: Այս խորհուրդները հնարավորություն են տալիս երիտասարդներին մասնակցել համայնքային խնդիրների լուծմանը և քաղաքացիական որոշումների կայացման գործընթացներին: Վրաստանի երիտասարդական խորհրդարանը կազմակերպում է տարբեր միջոցառումներ և քննարկումներ, որոնց միջոցով երիտասարդները կարող են արտահայտել իրենց կարծիքները և առաջարկություններ ներկայացնել տեղական ինքնակառավարման մարմիններին:

Երիտասարդական խորհուրդները խորհրդատվական դեր են կատարում տեղական իշխանությունների համար՝ ներկայացնելով երիտասարդների կարծիքներն ու առաջարկությունները տարբեր հարցերի վերաբերյալ: Խորհուրդները կարող են նախաձեռնել ծրագրեր և միջոցառումներ, որոնք ուղղված են երիտասարդների կարիքների բավարարմանը և նրանց հետաքրքրությունների պաշտպանությանը: Խորհուրդները կազմակերպում են սեմինարներ, քննարկումներ և այլ միջոցառումներ՝ բարձրացնելու երիտասարդների իրազեկվածությունը քաղաքացիական իրավունքների, պարտականությունների և ժողովրդավարական գործընթացների վերաբերյալ:

[24] International Canadian Youth Program. (2024). https://www.unac.org/internationalcanadianyouthdelegateprogramme

Երիտասարդական խորհրդարանների և խորհուրդների կազմավորումը և կազմը կարող են տարբերվել տարբեր համայնքներում, սակայն հիմնականում դրանք կազմված են լինում 14-29 տարեկան երիտասարդներից, անդամներն ընտրվում են դպրոցներում, երիտասարդական կազմակերպություններում կամ համայնքային հավաքներում: Անդամների պաշտոնավարման ժամկետը սովորաբար 1-2 տարի է, ինչը հնարավորություն է տալիս ավելի շատ երիտասարդների մասնակցել խորհրդի աշխատանքներին:

Միավորված Ազգերի Կազմակերպություն: Միավորված ազգերի կազմակերպությունը (ՄԱԿ) կարևոր դերակատարում ունի երիտասարդների մասնակցության խթանման գործում՝ նրանց ներգրավելով քաղաքական, տնտեսական և սոցիալական գործընթացներում: Կազմակերպությունը երիտասարդությունը դիտարկում է որպես գլոբալ փոփոխությունների շարժիչ ուժ և նրանց համար ստեղծում է հարթակներ, որոնց միջոցով կարող են ազդեցություն ունենալ միջազգային որոշումների կայացման վրա: ՄԱԿ-ը որդեգրել է «Երիտասարդական ռազմավարություն 2030» ծրագրային մոտեցումը,[25] որը միավորում է տարբեր գերատեսչությունների ջանքերը՝ ապահովելու երիտասարդների ներառական մասնակցությունը բոլոր մակարդակներում:

Այս ռազմավարության առանցքային նպատակներից է երիտասարդներին հնարավորություն տալ մասնակցելու ոչ միայն քաղաքացիական գործընթացներին, այլև մշակութային, կրթական և տնտեսական ոլորտներին՝ ապահովելով նրանց ձայնի լսելիությունը պետական կառույցներում, քաղաքացիական հասարակության կազմակերպություններում և միջազգային հարթակներում: ՄԱԿ-ը կարևորում է երիտասարդների դերը որպես փոփոխության գործակալներ՝ խթանելով նրանց մասնակցությունը կայուն զարգացման նպատակներին ուղղված գործողություններում:

ՄԱԿ-ի համակարգում գործող տարբեր գործակալություններ, այդ թվում՝ ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը (ՄԱԶԾ), ՅՈՒՆԵՍԿՕ-ն և ՅՈՒՆԻՍԵՖ-ը, իրականացնում են ծրագրեր, որոնք միտված են երիտասարդների հմտությունների զարգացմանը, առաջնորդության խթանմանը և նրանց քաղաքացիական ներգրավվածության

[25] Youth 2030: The UN Youth Strategy. (2025). https://www.un.org/youthaffairs/en

ամրապնդմանը: Այս նախաձեռնությունների շրջանակում կազմակերպվում են կրթական դասընթացներ, երիտասարդական համաժողովներ և առցանց հարթակներ, որոնք հնարավորություն են տալիս երիտասարդներին արտահայտելու իրենց կարծիքը գլոբալ մարտահրավերների վերաբերյալ:

Երիտասարդների մասնակցության ամրապնդման կարևոր մեխանիզմներից մեկը ՄԱԿ-ի **երիտասարդական պատվիրակների** ծրագիրն է, որը հնարավորություն է տալիս երիտասարդներին մասնակցել ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի քննարկումներին, ներկայացնել իրենց երկրներում առկա խնդիրները և հանդես գալ առաջարկներով: Այս ծրագիրը կարևոր քայլ է երիտասարդների ձայնի հնչեղությունը բարձրացնելու և նրանց քաղաքական գործընթացներում ներգրավելու համար: Այս ծրագրի շրջանակներում տարբեր երկրների երիտասարդ պատվիրակները հնարավորություն են ստանում մասնակցել ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նիստերին և արտահայտել իրենց դիրքորոշումը գլոբալ խնդիրների վերաբերյալ: Օրինակ՝ Հայաստանը ևս մասնակցել է այս ծրագրին, և հայ երիտասարդ պատվիրակները բարձրացրել են երիտասարդների ներգրավվածության, կրթության և զբաղվածության խնդիրները ՄԱԿ-ի բարձր ամբիոնից:

Բացի այդ, ՄԱԿ-ը աջակցում է երիտասարդների կողմից ղեկավարվող նախաձեռնություններին, որոնք ուղղված են համայնքային զարգացմանը, սոցիալական արդարության խթանմանը և կլիմայի փոփոխությունների դեմ պայքարին: Այս ծրագրերի միջոցով երիտասարդները հնարավորություն են ստանում իրականացնել տեղական մակարդակում փոփոխություններ՝ դառնալով իրենց երկրների զարգացման գործում առանցքային դերակատարներ:

Եվրոպայի Խորհուրդ: Եվրոպայի խորհուրդը (ԵԽ) կարևոր դեր է խաղում երիտասարդների մասնակցության խթանման և նրանց քաղաքացիական, սոցիալական ու քաղաքացիական ներգրավվածության ամրապնդման գործում: Որպես Եվրոպայի ամենահին միջկառավարական կազմակերպություն՝ այն մշակում և իրականացնում է ծրագրեր, որոնք ուղղված են երիտասարդների իրավունքների պաշտպանությանը, նրանց մասնակցության ընդլայնմանը և ժողովրդավարական արժեքների զարգացմանը: ԵԽ-ն երիտասարդներին դիտարկում է որպես հասարակության առաջընթացի առանցքային ուժ, և այդ նպատակով ստեղծել է բազմաբնույթ մեխանիզմներ՝ նրանց ձայնը լսելի դարձնելու և քաղաքացիական գործընթացներում ներգրավելու համար:

ԵԽ-ն ունի երիտասարդական ոլորտի ամուր քաղաքական հիմքեր, որոնք արտացոլված են տարբեր կոնվենցիաներում, առաջարկություններում և ծրագրային փաստաթղթերում: Այս կառույցի շրջանակում գործում է երիտասարդական քաղաքականության բնագավառում ընդունված մեխանիզմ՝ **համատեղ կառավարում** (co-management) կոչվող մոդելը, որն ապահովում է երիտասարդական քաղաքականությունների մշակման և իրականացման աշխատանքներում երիտասարդների ուղղակի մասնակցության հնարավորությունն ու կարողությունը: Այս մոդելի շրջանակում ստեղծվել է Երիտասարդության հարցերով խորհուրդը, որտեղ երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչները հնարավորություն ունեն քննարկելու և առաջարկություններ ներկայացնելու Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեին:

ԵԽ-ի երիտասարդական քաղաքականության հիմնական նպատակներից է խթանել երիտասարդների մասնակցությունը ժողովրդավարական գործընթացներին, քաղաքացիական հասարակության զարգացմանը և որոշումների կայացմանը տեղական, ազգային ու եվրոպական մակարդակներում: Այդ նպատակով կազմակերպությունը իրականացնում է մի շարք կրթական և վերապատրաստման ծրագրեր, որոնք ուղղված են երիտասարդների կարողությունների զարգացմանը: ԵԽ-ի աջակցությամբ գործում են երկու խոշոր կրթական կենտրոններ՝ Բուդապեշտում և Ստրասբուրգում, որտեղ երիտասարդները հնարավորություն են ստանում մասնակցելու առաջնորդության զարգացման ծրագրերին, ժողովրդավարության և մարդու իրավունքների վերաբերյալ դասընթացներին:

ԵԽ-ն կարևորում է նաև երիտասարդների մասնակցությունը տեղական մակարդակում, այդ իսկ պատճառով այն մշակել է **«Երիտասարդների մասնակցության քարտեզ»** ծրագիրը, որն ուղղված է տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքներում երիտասարդների ներգրավվածության ուժեղացմանը: Այս նախաձեռնության շրջանակում եվրոպական տարբեր երկրներում իրականացվել են տեղական երիտասարդական խորհրդարանների ստեղծմանն ու կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրեր:

ԵԽ-ն նաև նպաստում է երիտասարդների կողմից ղեկավարվող նախագծերի իրականացմանը՝ տրամադրելով դրամաշնորհային աջակցություն քաղաքացիական ներգրավվածությանը, մարդու իրավունքների պաշտպանությանը և երիտասարդների

քաղաքացիական մասնակցությանը վերաբերող նախաձեռնություններին: Երիտասարդական Հիմնադրամի (European Youth Foundation)[26] միջոցով այն ֆինանսավորում է երիտասարդական կազմակերպությունների նախագծերը՝ նպաստելով նրանց կարողությունների ամրապնդմանը և ազդեցության բարձրացմանը:

Ամփոփելով, Հայաստանում երիտասարդների մասնակցության խթանումը կարող է հիմնվել միջազգային հաջողված փորձի վրա, որի օրինակներից են Նորվեգիայի, Ֆինլանդիայի, Գերմանիայի, Կանադայի, Վրաստանի, ՄԱԿ-ի և Եվրոպայի Խորհրդի ծրագրերը: Երիտասարդների մասնակցության միջազգային փորձը ցույց է տալիս, որ արդյունավետ մեխանիզմների կիրառումը խթանում է նրանց ներգրավվածությունը քաղաքացիական և հասարակական գործընթացներին: Նորվեգիայում, Ֆինլանդիայում, Վրաստանում, Գերմանիայում և Կանադայում գործում են երիտասարդական խորհուրդներ և խորհրդարաններ, որոնք ստեղծում են երիտասարդների և պետական կառույցների միջև կապող օղակ: ՄԱԿ-ը և Եվրոպայի խորհուրդը միջազգային մակարդակով աջակցում են երիտասարդների իրավունքների պաշտպանությանը, առաջնորդության զարգացմանը և քաղաքացիական ներգրավվածության ընդլայնմանը: Այս փորձը կարող է ծառայել Հայաստանի համար՝ երիտասարդների ձայնը լսելի դարձնելու և նրանց դերը որոշումների կայացման գործընթացներում ամրապնդելու համար:

Այս բոլոր նախաձեռնությունները կարող են ներդրվել Հայաստանի Հանրապետությունում՝ խթանելով երիտասարդների մասնակցությունը տեղական ինքնակառավարման մարմիններում, բարելավելով նրանց քաղաքացիական իրազեկվածությունը ու հանրային հարցերում ներգրավվածությունը:

Ստորև ներկայացված աղյուսակը համառոտ ներկայացնում է տարբեր երկրների երիտասարդների մասնակցության մոդելները, մեխանիզմները և առանձնահատկությունները:

[26] European Youth Foundation. (2025). https://www.coe.int/en/web/european-youth-foundation

Երիտասարդների մասնակցության միջազգային փորձի ամփոփում

Երկիր	Մոդել/մեխանիզմ	Հիմնական առանձնահատկություններ	Հաջողված նախաձեռնություններ
Նորվեգիա	Երիտասարդական խորհուրդներ (Ungdomsråd)	- Գործում են տեղական և ազգային մակարդակներում - Խորհրդատվական դեր - Անդամները 13-25 տարեկան	Երիտասարդական բյուջե (Youth Budget)՝ երիտասարդների մասնակցությամբ քաղաքային բյուջեի բաշխման գործընթաց
Ֆինլանդիա	Երիտասարդական խորհուրդներ (Nuorisovatuusto)	- Գործում են տեղական և ազգային մակարդակներում - Երիտասարդները կարող են ուղղակիորեն մասնակցել քաղաքացիական որոշումների կայացման գործընթացին	Հելսինկիի երիտասարդական խորհուրդ՝ 30 անդամ, ներգրավվածություն քաղաքային իշխանության աշխատանքներում
Գերմանիա	Երիտասարդական խորհրդարաններ, Քաղաքացիական կրթական ծրագրեր	Երիտասարդների ակտիվ մասնակցություն քաղաքացիական որոշումների կայացման գործընթացում	Գերմանիայի տարբեր քաղաքներում երիտասարդական խորհրդարաններ, որոնք ունեն իրական ազդեցություն քաղաքային ծրագրերի վրա
Կանադա	Երիտասարդական ազգային խորհուրդ, Հասարակական ներգրավվածության ծրագրեր	Երիտասարդներին ուղղված ծրագրեր, որոնք ապահովում են քաղաքացիական մասնակցությունը և քաղաքացիական ակտիվությունը	Կանադայի երիտասարդական ազգային խորհուրդը՝ խորհրդատվական մարմին կառավարության համար
Վրաստան	Վրաստանի Երիտասարդական խորհուրդ	- Գործում է տեղական մակարդակում - Խորհրդատվական դեր համայնքային կառավարությունների համար	Երիտասարդների մասնակցությունը համայնքային ծրագրերին և որոշումների կայացման գործընթացներին
Եվրոպայի Խորհուրդ	Երիտասարդական պատվիրակների ծրագիր, «Երիտասարդական ռազմավարություն 2030»	- Երիտասարդների ներգրավվածություն քաղաքացիական, սոցիալական, տնտեսական որոշումների կայացման գործընթացներում - ՄԱԿ-ի տարբեր գործակալությունների ծրագրեր	ՄԱԿ-ի երիտասարդական պատվիրակներ՝ երիտասարդների մասնակցություն միջազգային քննարկումներին
ՄԱԿ	Համատեղ կառավարման (co-management) մոդել, Երիտասարդության հարցերով խորհուրդ	- Երիտասարդների ներգրավվածություն որոշումների կայացման գործընթացներում - Երիտասարդական ծրագրերի ֆինանսավորում	Երիտասարդության հիմնադրամ՝ աջակցություն երիտասարդական կազմակերպություններին

3. ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՀՀ-ՈՒՄ

ՀՀ-ում առկա մեխանիզմները, որոնցով հնարավոր է ապահովել ՀՀ քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց, այդ թվում՝ երիտասարդների մասնակցությունը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մակարդակներում որոշումների կայացմանը սահմանվում են ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ կողմից վավերացված միջազգային փաստաթղթերով, օրենքներով և այլ ենթաօրենսդրական ակտերով:

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մակարդակներում որոշումների կայացման գործընթացներին մասնակցության ամենապարզ ձևը հանդիսանում է ***ընտրելու իրավունքը***՝ ՀՀ Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ քվեարկության միջոցով:

Ընտրողը, իր ձայնը տալով իր նախընտրած թեկնածուին, իրավունք է տալիս տվյալ թեկնածուին իր փոխարեն կայացնել որոշումներ, որոնք անմիջական ազդեցություն են ունենալու պետության, համայնքի և անհատի գործունեության վրա: Ընտրելու իրավունքը հանդիսանում է մասնակցության անուղղակի ձև: Այսինքն՝ որոշումների կայացման անմիջական պատասխանատուն չի հանդիսանում հենց ընտրողը, այլ պատվիրակում է այլ անձի կամ անձանց իր անունից լուծելու պետական և տեղական նշանակության խնդիրներ:

Որոշումների կայացմանը անմիջականորեն մասնակցել հնարավոր է ***հանրաքվեի*** միջոցով: Ընդ որում, այն կարող է կազմակերպվել ինչպես պետական, այնպես էլ տեղական մակարդակում:

ՀՀ-ում ընտրելու, հանրաքվեի մասնակցելու իրավունք ունեն 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք:

Ազգային ժողովի ընտրություններին ընտրելու և հանրաքվեի մասնակցելու իրավունք ունեն միայն ՀՀ քաղաքացիները:

ՏԻՄ ընտրությունների և տեղական հանրաքվեի դեպքում ընտրելու իրավունք ունեն ինչպես տվյալ համայնքում առնվազն 6 ամիս հաշվառված ՀՀ քաղաքացիները, այնպես էլ տվյալ համայնքում առնվազն 12 ամիս հաշվառված ՀՀ քաղաքացիություն չունեցող անձինք:

Երիտասարդների մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներին. *Պետական մակարդակ*

ՀՀ օրենսդրությունը ՀՀ քաղաքացիներին, այդ թվում՝ երիտասարդներին, տալիս է մի շարք հնարավորություններ մասնակից լինելու պետական մակարդակում որոշումներին կայացման գործընթացներին:

Այս բաժնում ներկայացվում են պետական մակարդակում որոշումների կայացման գործընթացներին ՀՀ քաղաքացիների մասնակցության հիմնական եղանակները և որոշ եղանակների կիրառման առանձնահատկությունները, սահմանափակումները:

ՀԱՆՐԱՔՎԵԻ ԵՆ ԴՐՎՈՒՄ՝

- Սահմանադրության նախագիծը,
- Սահմանադրության որոշ հոդվածներում փոփոխություններ կատարելու նախագծերը,
- վերպետական միջազգային կազմակերպություններին ՀՀ անդամակցության, ինչպես նաև ՀՀ տարածքի փոփոխությանը վերաբերող հարցերը,
- հանրաքվեի միջոցով ընդունված օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծը:

ՀԱՆՐԱՔՎԵԻ ԿԱՐՈՂ ԵՆ ԴՐՎԵԼ՝

- Սահմանադրության այլ հոդվածներ, եթե դրա ընդունումն Ազգային ժողովը մերժել է,
- քաղաքացիական նախաձեռնության կարգով ներկայացված օրենքի նախագիծը, եթե դրա ընդունումն Ազգային ժողովը մերժել է:[27]

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԵՆ ԴՐՎՈՒՄ՝

- օրենսդրական ակտերի՝ ՀՀ Սահմանադրության, սահմանադրական օրենքների, օրենքների նախագծերը,
- ՀՀ կառավարության նորմատիվ և անհատական որոշումների նախագծերը,
- ՀՀ կառավարության ներքին իրավական ակտերի նախագծերը,
- ՀՀ կառավարության անդամների ներքին իրավական ակտերի նախագծերը:[28]

---

[27] «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենք, հոդված 4

[28] ՀՀ կառավարության 10.10.2018թ. « Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին» թիվ 1146-Ն որոշում

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ ԱՌԱՋԱՐԿԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ունեն ընտրելու իրավունք ունեցող ՀՀ քաղաքացիները: Այդ նպատակով ստեղծվում է 25 հոգուց բաղկացած նախաձեռնող խումբ, որը ենթակա է գրանցման Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից, որից հետո նախաձեռնող խումբն իրավունք է ստանում ձեռնարկելու օրենքի նախագծի ընդունման նախաձեռնությանը քաղաքացիների միացումը՝ ***առնվազն 50,000 ընտրելու իրավունք ունեցող ՀՀ քաղաքացիների*** ստորագրություններ հավաքելու միջոցով:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ստորագրությունների վավերականությունը հաստատելուց հետո, վերջինս դրա մասին որոշումը ուղարկում է նախաձեռնող խմբին, որից հետո նախաձեռնող խումբը իրավունք է ստանում նախագիծը ներկայացնել Ազգային ժողով:

Ստորագրությունների հավաքմանը (նախաձեռնել, կազմակերպել, օժանդակել) կարող են ներգրավվել 16 տարին լրացած քաղաքացիները:[29]

ԴԻՄՈՒՄՆԵՐԸ, ՀԱՐՑՈՒՄՆԵՐԸ ԿԱՄ ԲՈՂՈՔՆԵՐԸ կարելի է մուտքագրել՝

- Անձամբ համապատասխան գերատեսչություն այցելելով,
- Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի (https://e-request.am/hy) միջոցով ուղարկելով:

[29] ՀՀ Սահմանադրություն, հոդված 109, «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենք, հոդված 10

Երիտասարդների մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներին. *Տեղական մակարդակ*

Թեպետ պետական մակարդակում կան գործիքներ, որոնց միջոցով հնարավոր է ապահովել ՀՀ քաղաքացիների մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներին, սակայն ՀՀ-ում բնակվող անձանց առավել մոտ կանգնած իշխանության օղակը տեղական ինքնակառավարման մարմիններն են: Վերջիններս ընտրվել են այն նպատակով, որպեսզի լուծեն տվյալ համայնքի, համայնքի բնակիչների խնդիրները: Այդ իսկ պատճառով տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության խթանման գործիքներ ներդրված են նաև տեղական ինքնակառավարման բնագավառում:

ՀՀ-ն 2002թ. վավերացնելով Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան, հանձն է առել, կատարել խարտիայով նախատեսված դրույթները, ինչի արդյունքում ՀՀ տեղական ինքնակառավարմանը առնչվող իրավական դաշտում զգալի փոփոխություններ տեղի ունեցան: Բացի խարտիայից, ՀՀ-ն 2013թ.-ին ընդունել է նաև Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի տեղական ինքնակառավարման մարմինների գործերին մասնակցելու իրավունքի վերաբերյալ լրացուցիչ արձանագրությունը:

Թե՛ խարտիայի, թե՛ դրա լրացուցիչ արձանագրության ընդունումը ենթադրում էին տեղական ինքնակառավարման բնագավառի օրենսդրության համապարփակ փոփոխություններ: Այդպես, 2002թ.-ին ընդունվեց «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ նոր օրենքը: Իսկ լրացուցիչ արձանագրության ընդունումից հետո սույն օրենքը 2016թ.-ին ընդունվեց նոր խմբագրմամբ, որտեղ հստակեցվեցին տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կանոնակարգերը: Սույն փոփոխություններից հետո 2015թ.-ին մշակվեցին և 2016թ.-ից կիրառության մեջ դրվեցին տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության վերաբերյալ հետևյալ կարգերի օրինակելի ձևանմուշները՝

- Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգ,
- Համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգ,

- Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգ:

Վերոնշյալ կարգերի օրինակելի ձևանմուշների հիման վրա համայնքի ղեկավարի կողմից մշակվում են վերոնշյալ կարգերը և ներկայացվում են համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը:

Օրինակելի ձևանմուշները նախատեսված են որպես աջակցություն համայնքներին՝ մշակելու և հաստատելու վերոնշյալ կարգերը: Համայնքները կարող են օրինակելի ձևանմուշներում առկա տեղեկատվությունը լրացնել կամ փոփոխել՝ ելնելով տվյալ համայնքի առանձնահատկություններից և այլ գործոններից, սակայն այդ լրացումները և փոփոխությունները չպետք է հակասեն ՀՀ օրենսդրությանը:

Կարգերը ենթակա են հրապարակման համայնքի պաշտոնական համացանցային կայքում ներբեռնման հնարավորությամբ:

2017թ.-ին շրջանառության մեջ դրվեց նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանվող «Համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնության կազմակերպման և իրականացման ուղեցույցը»:

Ստորև ներկայացվում են ՀՀ-ում տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացներին համայնքի բնակիչների, այդ թվում՝ երիտասարդների մասնակցության եղանակները, հիմնական ձևերը և դրանց նկարագրերը:

Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցությունը

Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցությունը համայնքում իրականացվող գործընթաց է, որի միջոցով բնակիչները, առանց խտրականության, տեղեկացվում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կարող են ուղղակի կամ անուղղակի ներգործություն ունենալ տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների վրա:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 11, մաս 1

Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ՄԱՍՆԱԿՑԵԼ

16 ՏԱՐԻՆ ԼՐԱՑԱԾ ՏՎՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԲՆԱԿԻՉ

ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ

- ԱՆՁԱՄԲ
- ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ
- ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ[30]	
ԱԿՏԻՎ	**ՊԱՍԻՎ**
✓ Հանրային բաց լսումներ և քննարկումներ ✓ Համայնքային ժողովներ և հանդիպումներ ✓ Հարցումներ ✓ Ֆոկուս խումբ ✓ Խորհրդակցական մարմիններ ✓ Համայնքային ֆորմալ և ոչ ֆորմալ խմբեր (միություններ, միավորումներ, հիմնադրամներ, նախաձեռնող, ակտիվ խմբեր և այլն ✓ ԶԼՄ-ներ ✓ Համայնքի պաշտոնական համացանցային կայք ✓ Սոցիալական մեդիա և այլ համացանցային և համակարգչային տեխնոլոգիաներ ✓ Այլ	✓ Հանրային տեղեկատվություն ✓ Հանրային զեկույցներ և հաշվետվություններ ✓ Տեղեկատվական կենտրոններ ✓ «Մեկ պատուհանի» սկզբունքով ընդունարաններ ✓ Կրթական ծրագրեր ✓ Ընդունելություններ և «բաց դռների» ծրագրեր ✓ Այլ



[30] Համաձայն «Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգի» օրինակելի ձևանմուշի:

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐ[31]	
ՆՊԱՏԱԿԸ	Իրավական ակտերի նախագծերի և համայնքային հարցերի մասին շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրազեկման, ինչպես նաև նրանցից կարծիքների հավաքագրման աշխատանքների իրականացումը:
ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ/ԼՍՄԱՆ ԴՐՎՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ	• Համայնքի հնգամյա զարգացման ծրագիր, • միջնաժամկետ ծախսերի ծրագիր, • տարեկան բյուջե, • տարեկան բյուջեի կատարման հաշվետվություն, • համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումներ, • համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխություններ, • ՀՀ կառավարության կողմից վարչատարածքային բաժանման ծրագրվող փոփոխություններ, • համայնքի կառավարմանն ու զարգացմանն առնչվող կարևորագույն նախաձեռնություններ և հարցեր:
ՈՐՏԵՂ ՄԱՍՆԱԿՑԵԼ	• ՏԻՄ-երի նստավայրում, և/կամ • համայնքի որևէ ենթակառույցի շենքում, և/կամ • համայնքի բացօթյա որևէ տարածքում, և/կամ • համայնքի բոլոր բնակավայրերում (հնգամյա զարգացման ծրագրի, բյուջեի և վերջինիս կատարման տարեկան հաշվետվության նախագծերի հանրային քննարկման դեպքում):
Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ՄԱՍՆԱԿՑԵԼ	Շահագրգիռ բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձինք:
ԵՐԲ ԻՐԱԶԵԿԵԼ	Հանրային քննարկումների/լսումների իրականացման օրվանից առնվազն 15 օր առաջ:
ՈՐՏԵՂ ԻՐԱԶԵԿԵԼ	• ՏԻՄ-երի նստավայրում, • վարչական ղեկավարի նստավայրում, • համացանցային պաշտոնական կայքում, • ԶԼՄ-ների միջոցով:

[31] Համաձայն «Համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգի» օրինակելի ձևանմուշի

Հանրային քննարկումներ և բաց լսումներ

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ/ԼՍՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ

հանրային քննարկման/լսման ընթացքում

- **հարցեր ուղղել,**
- **առարկությունները և առաջարկությունները հնչեցնել բանավոր ձևով,**
- **առարկությունները և առաջարկությունները ներկայացնել գրավոր տեսքով:**

հանրային քննարկումների/լսումների ավարտից հետո 5 օրվա ընթացքում

- **առարկությունները և առաջարկությունները ներկայացնել գրավոր տեսքով:**

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ/ԼՍՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

Երբ

Հանրային քննարկումների ավարտից հետո 15-օրյա ժամկետում:

Որտեղ

- **ՏԻՄ-երի նստավայրում,**
- **բոլոր բնակավայրերի վարչական ղեկավարների նստավայրերում,**
- **համայնքի համացանցային պաշտոնական կայքում:**

Հանրային քննարկումների արդյունքներով լրամշակված նախագիծն՝ իրեն կից փաստաթղթերով, ներկայացվում է համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը:

ՏԻՄ-երի մշակած որոշումների նախագծերը հրապարակվում են համայնքի համացանցային պաշտոնական կայքում:
Համայնքի համացանցային պաշտոնական կայքը պետք է ապահովված լինի իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի հետ փոխգործելիությամբ (www.e-draft.am):

Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմիններ

Խորհրդակցական մարմինները համայնքի ղեկավարին կից, հասարակական կարգով գործող մարմիններ են, որոնց միջոցով ապահովվում է համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունը համայնքի կառավարմանն ու զարգացմանը:

Խորհրդակցական մարմինները, որպես համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների միավորված խումբ, կարող են խորհրդատվություն, եզրակացություններ և առաջարկություններ ներկայացնել համայնքի ղեկավարին՝ այդպիսով ակտիվ մասնակցություն ունենալով համայնքում քաղաքականությունների մշակման, որոշումների ընդունման և դրանց իրականացման արդյունքների մոնիթորինգի և գնահատման գործընթացներին:

Խորհրդակցական մարմինները ձևավորվում են «Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ավագանու որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկու ամսվա ընթացքում:

Դրանք գործում են մինչև համայնքի ղեկավարի պաշտոնավարման ժամկետի ավարտը:

Նորընտիր համայնքի ղեկավարի լիազորությունները ստանձնելուց հետո երկու ամսվա ընթացքում ձևավորվում են նոր կազմով խորհրդակցական մարմիններ:

Համայնքի նորընտիր ղեկավարի լիազորությունները ստանձնելուց հետո նոր կազմով խորհրդակցական մարմիններ ձևավորելիս՝ դրանց նախկին անդամներն իրենց համաձայնությամբ կարող են նորից ներկայացվել և ընդգրկվել դրանց կազմում:[32]

[32] Համաձայն «Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգի» օրինակելի ձևանմուշի

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ[33]	
ՆՊԱՏԱԿԸ	Նպաստել համայնքում տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացմանը և հասցեականությանը՝ ապահովելով համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը:
ԽՄ-ՆԵՐՆ՝ ԸՍՏ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՆ	• Հնգամյա զարգացման ծրագրի և տարեկան բյուջեի կառավարում, • քաղաքաշինություն, հողօգտագործում, տնտեսական ենթակառուցվածքներ, կոմունալ տնտեսություն, շրջակա միջավայրի պաշտպանություն և տրանսպորտի հարցեր, • կրթություն, մշակույթ, երիտասարդության հետ տարվող աշխատանքներ, առողջապահություն, սպորտ, սոցիալական (այդ թվում՝ երեխաների պաշտպանություն) հարցեր:
ԽՄ-Ի ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ	Նվազագույնը – 5 Առավելագույնը – 25
ԽՄ-Ի ԿԱԶՄԸ	Համայնքի ավագանու - 1-3 անդամ Մեկական անդամ՝ • համայնքի աշխատակազմի կամ համայնքային ենթակայության կազմակերպությունների մասնագետներ, • քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և խմբերի ներկայացուցիչներ, • մասնավոր հատվածի կազմակերպությունների և խմբերի ներկայացուցիչներ, • պետական կառավարման մարմինների՝ համայնքի տարածքում գործող տարածքային ծառայությունների ներկայացուցիչներ, • համայնքում գործող բազմաբնակարան բնակելի շենքերի կառավարման մարմինների (համատիրությունների, հավատարմագրային կամ լիազորագրային կառավարման մարմինների, կոոպերատիվների և այլնի) և (կամ) համայնքի թաղամասերի և բնակավայրերի ներկայացուցիչներ, • փորձագետներ, • համայնքի ակտիվ բնակիչներ, • այլ շահագրգիռ անձինք:

[33] Համաձայն «Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգի» օրինակելի ձևանմուշի

ԽՄ-Ի ԱՆԴԱՄՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ	Ավագանու անդամներ - ավագանու առաջադրմամբ, Աշխատակազմի կամ համայնքային ենթակայության կազմակերպությունների մասնագետներ - համայնքի ղեկավարի առաջադրմամբ, Այլ անդամներ - ԽՄ-ների անդամների ընտրության նպատակով համայնքի ղեկավարի կողմից ձևավորված հանձնաժողովի առաջադրմամբ՝ դիմում ներկայացրած անձանց կազմից:
ԻՆՉՊԵՍ ԴԻՄԵԼ ԵՐԲ Է ՀՐԱՊԱՐԱԿՎՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՏԵՂ Է ՀՐԱՊԱՐԱԿՎՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ	Ներկայացնել դիմումներ հրապարակված հայտարարության հիման վրա: «Համայնքի ղեկավարին կից ԽՄ-ների ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ավագանու որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 15 օրվա ընթացքում: ՏԻՄ նստավայրում, այլ վայրերում, համացանցային պաշտոնական կայքում:
ԻՆՉՊԵՍ Է ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ	Հարցազրույցի միջոցով:
ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆ	Թեկնածուների ընտրության նպատակով ստեղծված հանձնաժողով:
ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ	▪ Թեկնածուի կրթական ցենզ, ▪ համայնքի բնակչության տարբեր խմբեր ներկայացնող անձանց (կանայք, երիտասարդներ, խոցելի խմբեր, քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչներ և այլն) ներկայացուցչության ապահովում, ▪ հասարակական կարգով աշխատանքներ կատարելու նախկին փորձ, ▪ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի ներկայացուցչության ապահովում, ▪ հարցազրույցի արդյունքներ:

Համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնություն

Ավագանու նիստը *հրապարակային* է, այսինքն՝ նիստին կարող է ներկա գտնվել ցանկացած շահագրգիռ անձ:
Համայնքի ավագանու հրապարակային նիստերը առցանց հեռարձակվում են համայնքի պաշտոնական համացանցային կայքում:
Համայնքի ավագանին նիստին կարող է հրավիրել և լսել ցանկացած անձի:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՐՑ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ	
ՈՎՔԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ՀԱՆԴԵՍ ԳԱԼ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ	Համայնքում հաշվառված, 16 տարին լրացած անձանց ոչ պակաս, քան • 1 տոկոսը՝ 10,000-ից ավելի բնակիչ ունեցող համայնքներում, • 2 տոկոսը՝ 1,000-ից մինչև 10,000 բնակիչ ունեցող համայնքներում, • 4 տոկոսը՝ մինչև 1,000 բնակիչ ունեցող համայնքներում:
ԵՐԲ Է ՔՆՆԱՐԿՎՈՒՄ	Ոչ ուշ, քան համայնքի ղեկավարի կողմից դրա ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:
ՈՐՏԵՂ Է ՔՆՆԱՐԿՎՈՒՄ	Ավագանու նիստում:

Համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնության իրականացման փուլերը[34]

Նախաձեռնող խմբի ձևավորում (նախընտրելի է առնվազն 5 բնակչից կազմված)

↓

Նախաձեռնող խմբի կողմից համայնքային հարցի վերաբերյալ քննարկումներ

↓

Համայնքային հարցի ձևակերպում և նկարագրության կազմում

↓

Ստորագրահավաքի կազմակերպում և իրականացում

↓

Նախաձեռնության դիմումի կազմում և կից փաստաթղթերի հետ մեկտեղ ներկայացում համայնքի ղեկավարին

↓

Համայնքի ղեկավարի կողմից ստորագրահավաքի օրինականության ստուգում, եզրակացության կազմում

↓

Նախաձեռնության ներկայացում ավագանու քննարկմանը ավագանու նիստի ընթացքում

↓

Նախաձեռնության վերաբերյալ ավագանու որոշման ընդունում

↓

Նախաձեռնող խմբի կողմից հաշվետվության կամ զեկույցի կազմում և հանրայնացում

[34] Համաձայն «Համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնության կազմակերպման և իրականացման ուղեցույցի»

Մասնակցային բյուջետավորում

Բացի վերոնշյալ եղանակներից, 2022թ.-ից ՀՀ-ում, որպես «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում ՀՀ 2022-2024 թվականների գործողությունների ծրագրով նախատեսված հանձնառություն[35], սկիզբ է դրվել տեղական մակարդակում մասնակցային բյուջետավորման գործընթացի ներդրմանը: Մասնակցային բյուջետավորումը իրենից ներկայացնում է ծրագրային առաջարկներ ձևավորելու, մշակելու, ուղիղ քվեարկությամբ դրանց ընտրելու և իրականացնելու գործընթաց, որտեղ գործընթացին մասնակցություն ունեցող քաղաքացիներն են որոշում, թե ինչպես օգտագործել հանրային (պետական և համայնքային) բյուջետային միջոցների այդ նպատակով առանձնացված մասը:

Այն 2024թ.-ին փորձարկվել է ՀՀ 4 համայնքներում՝ Արագածոտնի մարզի Աշտարակ, Արմավիրի մարզի Արմավիր, Կոտայքի մարզի Աբովյան և Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքներում:

Մասնակցային բյուջետավորումը յուրաքանչյուր համայնքում իրականացնում է ***կամավորության*** սկզբունքով:

Վերոնշյալ գործընթացների խթանման համար ՀՀ պետական բյուջեով սուբվենցիայի տեսքով նախատեսվում են ֆինանսական միջոցներ՝ գործընթացին մասնակից ՀՀ համայնքներում մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված ծրագրերի իրականացման նպատակով:

Նախատեսված ֆինանսական միջոցները բաշխվում են համայնքների միջև հետևյալ կերպ՝

- 50 տոկոսը՝ մասնակցային բյուջետավորման մասնակից բոլոր համայնքների միջև
- 50 տոկոսը՝ ֆինանսական համահարթեցման դոտացիաների ընդհանուր գումարի մեջ տվյալ համայնքի համար նախատեսված ֆինանսական համահարթեցման դոտացիայի գումարի տեսակարար կշռին համապատասխան:[36]

---

[35] Բաց կառավարման գործընկերություն Հայաստան

[36] ՀՀ կառավարության 02.11.2023թ. «ՀՀ համայնքներում մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 1890 որոշում

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ[37]	
ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	• Նպաստել համայնքի բնակիչների ակտիվ մասնակցությանը համայնքի բյուջեի վերաբերյալ որոշումների կայացման, բյուջետային միջոցների բաշխման գործընթացին՝ հզորացնելով նրանց կարողությունները և բարելավելով կայացվելիք որոշումների որակը, • համայնքի բնակիչների առաջնահերթ շահերի հաշվառումը՝ թիրախավորելով նրանց համար հրատապ, կարևոր և արդի խնդիրները, • համայնքի բնակիչների առաջարկներով ներկայացված և նրանց կողմից ընտրված նախագծերի իրականացումը:
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ	• ՏԻՄ-երը, • համայնքապետարանների աշխատակազմերը, • համայնքի բնակիչները, • քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, • ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների և ՀՀ ֆինանսների նախարարությունները (մեթոդական աջակցության տրամադրում, սուբվենցիոն գործընթացի համակարգում):
ԱՌԱՋԱՐԿԸ ՊԵՏՔ Է՝	• Իրականացվի համայնքի տարածքում, • լինի ՏԻՄ-երի լիազորությունների սահմաններում, • չգերազանցի մասնակցային բյուջետավորման համար նախատեսված գումարը, • չլինի ընթացիկ, ընդգրկված լինի համայնքի միջնաժամկետ ծախսային ծրագրում, տվյալ տարվա աշխատանքային պլանում և բյուջեում, չիրականցվի այլ կազմակերպությունների կողմից, • լինի տեխնիկապես հնարավոր, • համապատասխանի ավագանու սահմանած առաջնահերթություններին:

[37] Համաձայն «Համայնքներում մասնակցային բյուջետավորման ընթացակարգերի վերաբերյալ մեթոդական ուղեցույցի»

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՓՈՒԼԵՐԸ[38]		
1.	ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՓՈՒԼ	• Հատկացվող գումարի չափի որոշում, • մասնակիցների շրջանակի և նրանց ներկայացվող չափանիշների որոշում, • առաջարկների ներկայացման տարածքային կամ թեմատիկ առաջնահերթությունների որոշում, • առաջարկների նախնական գնահատման չափանիշների որոշում, • մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման հանձնաժողովի ստեղծում:
2.	ԻՐԱԶԵԿՄԱՆ ՓՈՒԼ	Տեղեկատվական արշավի պլանավորում և իրականացում հետևյալ միջոցներով՝ • համայնքի պաշտոնական համացանցային կայք, • սոցիալական ցանցեր, լրատվամիջոցներ, • տպագիր նյութերի հրապարակում, ցուցատախտակների և պաստառների տեղադրում, • բնակիչների հետ հանդիպումներ, բնակարանային այցելություններ, հեռախոսազանգերի իրականացում, • ժողովների, լսումների, քննարկումների կազմակերպում:
3.	ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՓՈՒԼ	Հայտեր կարող են ներկայացնել 16 տարին լրացած յուրաքանչյուր բնակիչ • անձամբ, • հասարակական միավորումների և քաղաքացիական նախաձեռնությունների միջոցով: Առաջարկները ներկայացվում են համայնքի ղեկավարի սահմանած՝ առաջարկների ներկայացման հայտի ձևաչափին համապատասխան: Հայտերը կարող են ներկայացվել հետևյալ տարբերակներով՝ • էլեկտրոնային, • թղթային: Էլեկտրոնային տարբերակով հայտեր կարող են ներկայացնել միայն համապատասխան հարթակներում գրանցված օգտատերերը:
4.	ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓՈՒԼ	• Ստացված առաջարկների հավաքագրում, ամփոփում և ցանկի կազմում, • առաջարկների նախնական գնահատում, • հանրային քննարկման համար պատրաստված և սահմանված չափանիշներին չհամապատասխանող առաջարկների ցանկերի և դրանց հիմնավորումների կազմում,

[38] Համաձայն «Համայնքներում մասնակցային բյուջետավորման ընթացակարգերի վերաբերյալ մեթոդական ուղեցույցի»

		• սահմանված չափանիշներին չհամապատասխանող առաջարկների և դրանց հիմնավորումների վերաբերյալ հաշվետվությունների կազմում և հրապարակում, • հանրային քննարկման համար պատրաստված առաջարկների վերբեռնում համայնքի պաշտոնական կայք:
5.	ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԼՍՈՒՄՆԵՐԻ ՓՈՒԼ	Հանրային քննարկումների և լսումների կազմակերպում հետևյալ միջոցներով՝ • համայնքի պաշտոնական կայքում, • սոցիալական ցանցերում, • հեռուստատեսությամբ, • համայնքի բնակիչների հետ հանդիպումների, • այլ միջոցներով:
6.	ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ	• Առաջարկների վերբեռնում համայնքի պաշտոնական կայք կամ հարթակ քվեարկության համար, • Քվեարկություն: Քվեարկելու իրավունք ունեն միայն տվյալ համայնքի 16 տարին լրացած բնակիչները: Քվեարկության մասնակիցը կարող է քվեարկել առավելագույնը երեք առաջարկ-նախագծերի օգտին: Կարող են սահմանվել քվեարկության այլընտրանքային եղանակներ: • Քվեարկության արդյունքների հրապարակում համայնքի պաշտոնական համացանցային կայքում, • Հաղթած է(են) համարվում այն առաջարկ(ներ)ը, որի(որոնց) օգտին քվեարկել են բոլոր քվեարկողների ընդհանուր թվից նվազման կարգով քվեարկության մասնակիցները, բայց ոչ պակաս, քան յուրաքանչյուր առաջարկ-նախագծի օգտին քվեարկած՝ քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցողների առնվազն մեկ տոկոսը:
7.	ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՒԼ	• Ընտրված առաջարկի(ների) փոխանցում համայնքապետարան և մշակում, • առաջարկի(երի) ներկայացում համայնքի ավագանուն, • ընտրված առաջարկի(ների) իրականացում, • առաջարկի(ների) իրականացման ընթացքում համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից մշտադիտարկման իրականացում, • իրականացման ընթացքի և ծախսված գումարների մասին տեղեկատվության հրապարակում համայնքի պաշտոնական համացանցային կայքում, • իրազեկման աշխատանքներ հանձնաժողովի կողմից:
8.	ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ	Հանձնաժողովի կողմից հաշվետվությունների կազմում և ներկայացում համայնքի ղեկավարին և հրապարակում համայնքային կայքում:

4. ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ

Սույն բաժնում ներկայացված է որոշումների կայացման գործընթացներին երիտասարդների մասնակցության ակտիվ ուսուցման գործիքակազմը, որը ներառում է թեմային առնչվող գործնական վարժություններ, խմբային աշխատանքներ, քննարկումներ և իրավիճակային խաղեր: Վերջինների մշակման համար հիմք են հանդիսացել միջազգային պրակտիկայում կիրառելի ձեռնարկներում, ուղեցույցներում և այլ փաստաթղթերում առկա օրինակները, որոնք հարմարեցվել են հայաստանյան համատեքստին:

Գործիքակազմի կիրառությունը հնարավորություն կտա մասնակիցներին հասկանալ որոշումների կայացմանն առնչվող տարբեր իրավիճակներ, ինչը կօգնի տարբեր խնդիրների արդյունավետ լուծմանը և առօրյա կյանքում հետագա քայլերի և գործողությունների ճիշտ ընտրությանը:

Ստորև ներկայացված վարժություններն ու իրավիճակային խաղերը դասակարգված են ըստ բարդության աստիճանի: «Բարդ» անվանակարգում ներկայացված խաղերը ենթադրում են հանրային կառավարման, տեղական ինքնակառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, լիազորությունների և գործունեության վերաբերյալ գիտելիքների բարձր մակարդակ: Միջին բարդության խաղերը ենթադրում են վերջինների վերաբերյալ սահմանափակ գիտելիքներ: «Պարզ» անվանակարգում ընդգրկված խաղերը սկսնակների և հանրային կառավարման, տեղական ինքնակառավարման համակարգերի գործունեությանը նոր ծանոթացողների համար են: Բարդության մակարդակները ներկայացված են՝ ըստ համապատասխան գույների.

Պարզ

Միջին բարդության

Բարդ

«Պատմիչները»

Նպատակ	**Երիտասարդների մոտ զարգացնել թիմային աշխատանքի կարողությունները, ստեղծագործական մտածողությունը և հաղորդակցման հմտությունները՝ խրախուսելով լսելու, արագ արձագանքելու և համատեղ պատմություն ստեղծելու հմտությունները:**
Ժամանակ	20 րոպե
Մասնակիցների թիվը	Նվազագույնը՝ 5 հոգի
Անհրաժեշտ պարագաներ	-
Գործողություններ	Խնդրեք, որպեսզի մասնակիցները կանգնեն շրջանաձև և նրանցից մեկը որևէ բառ արտաբերի, այնուհետև նրա կողքի կանգնած անձը ավելացնի ևս մեկ բառ: Այդպես շարունակ, բոլորը հերթականությամբ մեկ բառ ավելացնելով՝ կազմում են պատմություն: Այն պետք է իմաստալից լինի, և յուրաքանչյուր բառի ավելացմամբ դրա միտքը հնարավոր է շարունակ փոփոխվի: Մի քանի շրջան պտտվելով շարունակեք վարժությունն այնքան, քանի դեռ պատմությունն ավարտված չէ: Վարժության ավարտին խնդրեք մասնակիցները կիսվեն իրենց տպավորություններով: Ստորև ներկայացված հարցերը կարող են օգտակար լինել. • Արդո՞ք դժվար էր բառ մտածելը: • Արդյո՞ք մասնակիցները նախօրոք էին պլանավորում իրենց բառը, թե մտածում էին, երբ իրենց հերթն էր հասնում՝ ելնելով պատմության իմաստից: • Արդյո՞ք վարժությունը օգնեց մասնակիցներին զարգացնելու իրենց արագ կողմնորոշվելու կամ որոշումներ կայացնելու հմտությունները:
Վերջնարդյունք	Մասնակիցների մոտ զարգացել է ստեղծագործական մտածելակերպը, լսելու, տրամաբանական կապեր ստեղծելու և արագ որոշումներ կայացնելու ունակությունները:

«Դանակ և պատառաքաղ»

Նպատակ	**Մասնակիցներին սովորեցնել համագործակցել միմյանց հետ, զարգացնել ստեղծարար մտածողությունը և ուշադրություն դարձնել մանրուքներին:**
Ժամանակ	60 րոպե
Մասնակիցների թիվը	6-20 հոգի
Անհրաժեշտ պարագաներ	Դանակ և պատառաքաղ
Գործողություններ	Խնդրեք մասնակիցներին նստել այնպես, որ կազմվի շրջան: Բոլորին զգուշացրեք, որ խաղի կանոնները միայն մեկ անգամ են ներկայացվելու և ուշադիր լսեն ամեն բան: Մասնակիցներին ասեք, որ նրանցից յուրաքանչյուրը պետք է փոխանցի դանակը և պատառաքաղը իր կողքի մասնակցին կամ խաչված կամ ուղիղ: Դա անելու ընթացքում յուրաքանչյուր մասնակից ամբողջ խմբին պետք է ասի, արդյոք նա դա արեց խաչված, թե ուղիղ: Ապա ֆասիլիտատորը պետք է հայտնի յուրաքանչյուր մասնակցին, արդյոք դա ճիշտ է, թե ոչ: Դանակը և պատառաքաղը կարող են լինել այն դիրքում, ինչպես ցանկանում է յուրաքանչյուր մասնակիցը, բայց պատասխանը կլինի ճիշտ միայն այն դեպքում, երբ նրանց ասած բառը համապատասխանի իրենց ոտքերի դիրքի հետ: Գաղտնի կանոնն է այն է, որ «խաչված» կամ «ուղիղ» բառերը ասելը կախված չէ դանակի և պատառաքաղի դիրքից, այլ դանակը և պատառաքաղը փոխանցող մասնակցի ոտքերի դիրքից՝ արդյոք դրանք խաչված են, թե ուղիղ: Մոտ 10 րոպե այս գործողության պարբերաբար իրականացումից հետո, ընդհատեք խաղը, և խնդրեք այն մասնակիցներին, ովքեր չեն հասկացել գաղտնի կանոնը, պատմեն իրենց զգացողությունների մասին: Ապա նույն հարցը տվեք այն մասնակիցներին, որոնք կարողացել են գուշակել գաղտնի կանոնը: Գաղտնի կանոնը բացահայտած անձանց հարցրեք, թե ինչու չկիսվեցին մյուս մասնակիցների հետ (հիմնականում մասնակիցները հենց այդպես էլ անում են): Քննարկեք մասնակիցների հետ, թե ինչ կապ են տեսնում վարժության ընթացքում իրենց փորձառության և մասնակցության միջև:
Վերջնարդյունք	Մասնակիցների մոտ զարգացել են միմյանց հետ համագործակցելու, ընդհանուր գաղափարի շուրջ կենտրոնանալու ունակությունները և ստեղծագործական մտածելակերպը:

«Փազլի մասնիկ»

Նպատակ	**Սովորեցնել աշխատել թիմերում, ներկայացնել յուրաքանչյուր անհատի դերը խմբում:**
Ժամանակ	20 րոպե
Մասնակիցների թիվը	10-20 հոգի
Անհրաժեշտ պարագաներ	2 հատ 10-15 մասնիկից կազմված փազլ (օրինակ, ՀՀ քարտեզի փազլներ https://xaxalove.am/product/taxtak_qartez/)
Գործողություններ	Առաջարկեք մասնակիցներին բաժանվել 2 խմբի: Յուրաքանչյուր խմբի մասնակիցներին տվեք մեկական փազլի կտոր և տվեք 2 րոպե ժամանակ փազլը հավաքելու համար: Փազլի հավաքելուց հետո քննարկեք, թե որքանով է կարևոր խմբային աշխատանքը և խմբի յուրաքանչյուր անդամի դերը խմբային աշխատանքում:
Վերջնարդյունք	Մասնակիցների մոտ զարգացել են արագ կողմնորոշվելու և իրար հետ համագործակցելու ունակությունները և յուրաքանչյուր մասնակցի դերի կարևորության ընկալումը:

«Մասնակցություն՝ առանց խոչընդոտների»

Նպատակ	**Խթանել մասնակիցների քննադատական մտածողությունը, թիմային համագործակցությունը և համայնքային մասնակցության վերաբերյալ իրազեկվածությունը՝ վերլուծելով տեղական ինքնակառավարմանը չմասնակցելու պատճառները և առաջարկելով մեթոդներ բնակիչների ներգրավվածությունն ակտիվացնելու համար:**
Ժամանակ	40 րոպե
Մասնակիցների թիվը	Նվազագույնը՝ 6 հոգի
Անհրաժեշտ պարագաներ	Ֆլիպչարթներ, գրիչներ, մարկերներ

Գործողություններ	Մասնակիցները բաժանվում են 2 խմբի, և յուրաքանչյուր խմբին տրվում է 2 հարց՝ 1. Ինչու՞ են համայնքի բնակիչները խուսափում տեղական ինքնակառավարմանը մասնակից լինելու գործընթացներից 2. Ինչպե՞ս և ի՞նչ մեթոդներով է կարելի բարձրացնել համայնքային կյանքի նկատմամբ բնակիչների հետաքրքրության մակարդակը, շահադրդել մասնակցելու տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացին: Հարցաթերթիկը ստանալուց հետո խմբերի մասնակիցները պետք է պատասխանեն վերոնշյալ հարցերին՝ պատկերելով իրենց տեսակետները ֆլիպչարթին և ներկայացնեն խմբի աշխատանքը դասընթացի մնացած մասնակիցներին: Խմբային աշխատանքի ավարտից հետո ուսուցանողները վերլուծում են աշխատանքի ընթացքն ու ամփոփում արդյունքները՝ կատարելով համապատասխան եզրահանգումներ:
Վերջնարդյունք	Մասնակիցներն առավել հստակ պատկերացում ունեն տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության վերաբերյալ, բացահայտել են մասնակցության նկատմամբ տարբեր համայնքներում բնակիչների պասիվության և անտարբերության պատճառները, մշակել էն բնակիչների մասնակցության աստիճանի խթանմանն ուղղված քայլեր:

«Եթե ես կառավարեի աշխարհը»

Նպատակ	**Երիտասարդների մոտ զարգացնել քննադատական մտածողությունը, թիմային աշխատանքը և հաղորդակցման հմտությունները՝ միաժամանակ ծանոթացնելով նրանց որոշումների կայացման, կառավարման և քաղաքացիական ներգրավվածության գործընթացների կարևորության հետ:**
Ժամանակ	30 րոպե
Մասնակիցների թիվը	Նվազագույնը՝ 6 հոգի
Անհրաժեշտ պարագաներ	Գրիչներ, մարկերներ, թղթեր
Գործողություններ	Բաժանեք մասնակիցներին մի քանի խմբի, որոնք բաղկացած կլինեն 3-4 մասնակիցներից՝ կախված ընդհանուր թվից: Ներկայացրեք մասնակիցներին, որ նրանք բացառիկ հնարավորություն ունեն 1 օրով դառնալու աշխարհի կառավարիչները: Խնդրեք, որպեսզի մասնակիցները մտածեն և թղթին

	գրեն մի շարք օրենքներ, որոնք պարտադիր կիրառության մեջ կդրվեն: Աշխատանքի ավարտին խնդրեք մասնակիցներին կիսվել մնացածների հետ իրենց գաղափարներով: Մի քանի հարցեր հնչեցրեք քննարկման համար, օրինակ՝ • Արդյո՞ք օրենքները անհատական են, այսինքն՝ վերաբերում են կոնկրետ անձանց կամ դրանց խմբին, թե համամարդկային են, այսինքն՝ կիրառելի ամբողջ աշխարհում: • Արդյո՞ք ընդունված օրենքները կապ ունեն այժմ աշխարհում կատարվող իրադարձությունների հետ:
Վերջնարդյունք	Մասնակիցների մոտ զարգացել են մասնակիցների թիմում աշխատելու, հաղորդակվելու և փաստարկված խոսք կառուցելու հմտությունները: Մասնակիցները պատկերացում ունեն տարաբնույթ օրենքների շրջանակների և կարգավորման տիրույթների վերաբերյալ, ունակ են կապ ստեղծել իրենց կողմից առաջարկված օրենքների ու երկրում/աշխարհում տիրող իրադարձությունների միջև:

«Իմ երազանքների համայնքը»

(կիրառել, այն դեպքում, երբ մասնակիցները միևնույն համայնքից են)

Նպատակ	**Զարգացնել երիտասարդների ռազմավարական մտածողությունը, երևակայությունը և հնարավորություն տալ իրենց մասնակցության և ներդրում ունենալու տարբերակները բացահայտել երազանքների համայնքի ստեղծման աշխատանքներում:**
Ժամանակ	40 րոպե
Մասնակիցների թիվը	Նվազագույնը՝ 6 հոգի
Անհրաժեշտ պարագաներ	Գրիչներ, գունավոր մարկերներ, ֆլիպչարթեր
Գործողություններ	Խնդրեք, որպեսզի մասնակիցները բաժանվեն մի քանի խմբերի՝ կախված մասնակիցների ընդհանուր թվաքանակից: Յուրաքանչյուր խումբ պետք է նկարի իր երազանքների համայնքը: Այնուհետև մասնակիցները լսարանին պետք է ներկայացնեն իրենց աշխատանքը և նկարագրեն այն քայլերն ու գործողությունները, որոնք անհրաժեշտ են իրենց երազանքների համայնքի ստեղծման համար:

Վերջնարդյունք	Մասնակիցների մոտ զարգացել են մասնակիցների թիմային աշխատանքի իրականացման, ստեղծագործական մտածողության և հանրային խոսքի հմտությունները: Մասնակիցները քաջ գիտակցում են համայնքի զարգացման գործում ունեցած կարևոր դերը և ունակ են համայնքի տեսլականի իրագործման համար գործնական լուծումներ մշակել՝ հաշվի առնելով իրենց համայնքի հնարավորությունները:

«Համայնքային խնդիրների քարտեզագրում»

(կիրառել, այն դեպքում, երբ մասնակիցները միևնույն համայնքից են)

Նպատակ	**Բացահայտելով համայնքային խնդիրները՝ հնարավորություն ընձեռել երիտասարդներին մշակելու դրանց գործնական լուծմանն ուղղված քայլեր:**
Ժամանակ	40 րոպե
Մասնակիցների թիվը	Նվազագույնը՝ 6 հոգի
Անհրաժեշտ պարագաներ	Գրիչներ, գունավոր մարկերներ, ֆլիպչարթեր
Գործողություններ	Խնդրեք, որպեսզի մասնակիցները բաժանվեն մի քանի խմբերի: Յուրաքանչյուր խումբ պետք է նշի իր համայնքի առաջնահերթ լուծում պահանջող խնդիրները: Այնուհետև խմբերը պետք է մտածեն, թե յուրաքանչյուր խնդրի լուծման համար ինչ քայլեր ու աշխատանքներ է պետք իրականացնել, և իրենք ինչպես կարող են իրենց ներդրումն ունենալ վերոնշյալ խնդիրների լուծման աշխատանքներում:
Վերջնարդյունք	Մասնակիցների մոտ զարգացել են թիմային աշխատանքի, վերլուծական մտածողության և նախաձեռնողականության հմտությունները: Մասնակիցներն ունեն հստակ մշակված քայլեր՝ ուղղված համայնքային խնդիրների լուծմանը և գիտակցում են համայնքի զարգացման գործընթացում իրենց ներդրման հնարավորությունները:

«Մասնակցության ձնագունդ»

Նպատակ	**Ներկայացնել «մասնակցություն» հասկացության տարբեր սահմանումներ, արտացոլել մասնակիցների՝ որոշումների կայացման գործընթացին մասնակցությունը:**
Ժամանակ	60 րոպե
Մասնակիցների թիվը	8, 16 կամ 24 հոգի
Անհրաժեշտ պարագաներ	Գրիչներ, մարկերներ, թղթեր, ֆլիպչարթներ
Գործողություններ	Խնդրեք յուրաքանչյուր մասնակցին թղթի վրա գրել «մասնակցություն» հասկացության իրենց սահմանումը: Ապա մասնակիցները բաժանվում են զույգերի: Յուրաքանչյուր զույգ մեկը մյուսին ներկայացնում է սահմանման իր տարբերակը և դրա հիման վրա յուրաքանչյուր զույգ համաձայնության են գալիս մեկ ընդհանրական սահմանման շուրջ, որը ընդունելի է երկուսի համար էլ: Ապա յուրաքանչյուր զույգը միանում է մեկ այլ զույգի, և կազմվում են 4 հոգանոց խմբեր: 4 հոգանոց խմբերի յուրաքանչյուր զույգը ներկայացնում է իր սահմանումը, որից հետո որոշվում է մեկ ընդհանրական սահմանում երկու զույգի համար: Նույն տրամաբանությամբ ստեղծվում են 8 հոգանոց խմբեր և իրականացվում է նույն գործընթացը: Ընդհանուր քննարկման ժամանակ յուրաքանչյուր 8 հոգանող խումբ ներկայացնում է «մասնակցության» իր սահմանումը: Դասընթացավարը ֆլիպչարտի վրա գրում է այն հատվածները, որոնք նույնաբովանդակ սահմանվել են բոլոր խմբերում, առանձնացվում են յուրահատուկ սահմանումները և մոտեցումները: Վարժության ավարտին դասընթացավարը ներկայացնում է «մասնակցության» մի քանի պաշտոնական սահմանում և համեմատականներ տանում խմբերի ներկայացրած սահմանումների հետ:
Վերջնարդյունք	Մասնակիցների մոտ զարգացել են քննադատական և ստեղծարար մտածողությունը, որոշակի գործընթացներին հստակ սահմանումներ տալու և դրանք նկարագրելու, իրար հետ համագործակցելու, կարծիքները համադրելու ունակությունները:

«Իմ քաղաքը, իմ կանոնները»

Նպատակ	**Օգնել երիտասարդներին հասկանալ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը, մասնակցային բյուջետավորումը և քաղաքականության մշակմանն առնչվող հարցերը՝ դերային խաղերի միջոցով:**
Ժամանակ	40 րոպե
Մասնակիցների թիվը	Նվազագույնը՝ 6 հոգի
Անհրաժեշտ պարագաներ	Թուղթ, գրիչներ, բյուջեի օրինակ կամ հորինված բյուջե
Գործողություններ	Մասնակիցներին տարբեր դերերում նշանակել (համայնքի ղեկավար/քաղաքապետ, ավագանու անդամներ, բիզնեսի սեփականատերեր, քաղաքացիներ) և տրամադրել նրանց համայնքային մի շարք խնդիրներ (օրինակ, աղբահանության, տրանսպորտային համակարգի, մանկապարտեզների խնդիրներ), և սահմանափակ բյուջե (5 մլն դրամ): Համայնքի ղեկավարը/քաղաքապետն ու ավագանին, մյուս խմբերի հետ բանակցելու արդյունքում որոշում են, թե ինչպես են միջոցները հատկացնում՝ ամենահրատապ խնդիրները լուծելու համար: Որոշումները կայացնելուց հետո մասնակիցները քննարկում են քննարկման ընթացքում առաջ եկած մարտահրավերները և բյուջետային սահմանափակումները:
Վերջնարդյունք	Մասնակիցների մոտ զարգացել են վերլուծական և ստեղծագործական մտածողությունը, գործընթացները ընկալելու և մեկնաբանելու կարողությունները, ինչպես նաև համագործակցության, կարծիքների փոխանակման և դրանք համադրելու ունակությունները: Մասնակիցները դերային խաղերի միջոցով խորացնում են իրենց պատկերացումները տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքի, մասնակցային բյուջետավորման և քաղաքականությունների մշակման գործընթացների վերաբերյալ:

«Համայնքային լաբիրինթ»

Նպատակ	**Օգնել մասնակիցներին վեր հանել իրենց համայնքի առօրյա դժվարությունները (տրանսպորտ, աղբահանություն, բակային տարածքներ, լուսավորություն, երիտասարդների զբաղվածություն և այլն), քարտեզագրել խնդիրները և մշակել լուծման հնարավոր մեխանիզմներ՝ ներգրավելով համայնքային ռեսուրսները:**
Ժամանակ	60 րոպե
Մասնակիցների թիվը	7-14 հոգի
Անհրաժեշտ պարագաներ	Համայնքային քարտեզ, կպչուն թղթեր, մարկերներ, գրիչներ, գրառման թերթիկներ յուրաքանչյուր խմբի համար
Գործողություններ	Մասնակիցները բաժանվում են 2-4 հոգանոց խմբերի՝ ըստ իրենց թաղամասի կամ համայնքի: Յուրաքանչյուր խմբի տրամադրվում է համայնքային/թաղային քարտեզը, որտեղ նշվում են առկա խնդիրները (օրինակ՝ աղտոտված բակ, վնասված նստարան, լուսավորության բացակայություն, տարածք երիտասարդների համար և այլն)՝ ամրացնելով պիտակներ ու նկարագրություններ քարտեզի մոտարկված վայրերում: Խմբերը պետք է ընտրեն ամենակարևոր երեք խնդիրն ու փորձեն գտնել հնարավոր լուծումներ՝ հաշվի առնելով համայնքի հնարավորությունները (ՏԻՄ, ՔՀԿ-ներ, կամավորական ծրագրեր, երիտասարդական նախաձեռնություններ): Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է խնդիրներն ու լուծման իրենց առաջարկած քայլերը: Մյուս խմբերը կարող են հարցեր տալ կամ լրացումներ անել: Խմբավարն ամփոփում է խաղի արդյունքները, առանձնացնում գաղափարները, որոնք կարող են իրականում վերածվել նախաձեռնությունների և փոխանցվում համայնքային երիտասարդական խորհուրդին կամ տեղական իշխանությանը:
Վերջնարդյունք	Մասնակիցների մոտ զարգացել են քննադատական մտածողությունը, համայնքային խնդիրների վերլուծության հմտությունները և փոխգործակցության կարողությունները: Նրանք կարողացել են ճանաչել իրենց թաղամասի սոցիալական ու միջավայրային խնդիրները, առաջարկել լուծումներ և ներկայացնել դրանք տարբեր շահառուների համար հասկանալի ձևով: Խաղի արդյունքում ձևավորվել է նաև մասնակցային պլանավորման փորձառություն, որը նպաստում է ակտիվ քաղաքացի դառնալուն:

«Հույզեր»

Նպատակ	**Երիտասարդների մոտ զարգացնել սեփական տեսակետներն ու կարծիքները փաստարկված ներկայացնելու հմտությունները:**
Ժամանակ	45 րոպե
Մասնակիցների թիվը	Նվազագույնը՝ 3 հոգի
Անհրաժեշտ պարագաներ	3 թուղթ, որոնցից յուրաքանչյուրի վրա պատկերված կլինի մեկական հույզ՝ ուրախ, տխուր և չկողմնորոշված.
Գործողություններ	Սենյակի պատերին փակցրեք հույզերը՝ յուրաքանչյուր պատին մեկական: Մասնակիցների համար հնչեցրեք հակասական և միանշանակ պատասխան չունեցող տարբեր մտքեր, որոնց նրանք կարող են դեմ, կողմ լինել կամ չկողմնորոշվել պատասխանի հարցում: Կողմ լինելու դեպքում մասնակիցները մոտենում են այն պատին, որին փակցված է ժպտացող հույզը, դեմ լինելու դեպքում՝ տխուր, իսկ պատասխան չունենալու դեպքում՝ չկողմնորոշված հույզին: Մտքերը կարող են լինել հետևյալը, սակայն չսահմանափակվել այսքանով՝ 1. Բոլոր բնակիչները պետք է մասնակցեն հանրային որոշումների կայացմանը: 2. Տեղական ինքնակառավարման համակարգը պետք է լիովին անկախ լինի կենտրոնական կառավարման համակարգից: 3. Բոլոր համայնքներում պետք է ներդնել պարտադիր էլեկտրոնային կառավարման համակարգ: 4. Համայնքի ղեկավարները պետք է ընտրվեն ուղղակի կերպով՝ բնակիչների կողմից: 5. Կառավարման կենտրոնացված մոդելը ավելի արդյունավետ է, քան ապակենտրոնացված մոդելը: 6. Որոշումների կայացման գործընթացում արհեստական բանականության օգտագործումը կբարելավի կառավարման որակը: 7. Լավ ղեկավարներ ծնվում են, այլ ոչ թե դառնում: 8. Կառավարիչը պետք է լինի «հրամանատար», այլ ոչ թե թիմի անդամ: 9. Ավագանու անդամները պետք է վարձատրվեն: 10. Երկրի ղեկավարները պետք է պարտադիր ունենան բարձրագույն կրթություն: Համապատասխան հույզի մոտ կանգնած մասնակիցներին հարցրեք, թե ինչպես են մեկնաբանում իրենց ընտրությունը:

Վերջնարդյունք	Մասնակիցների մոտ զարգացել են տարբեր տեսակետներ լսելու, սեփական կարծիքը փաստարկված արտահայտելու և հասարակական կառավարման հարցերին քննադատաբար մոտենալու կարողությունները:

Դերախաղ «Կառուցել, թե՞ չկառուցել»

Նպատակ	**Զարգացնել երիտասարդների քննադատական մտածողության և բանավիճելու հմտությունները՝ տարբեր տեսանկյուններից փաստարկներ ներկայացնելու միջոցով:**
Ժամանակ	1 ժամ
Մասնակիցների թիվը	Նվազագույնը՝ 11 հոգի
Անհրաժեշտ պարագաներ	Դերերի նկարագիր
Գործողություններ	Մասնակիցներին ներկայացվում է հետևյալ իրավիճակը: Մի համայնքում համայնքային իշխանության ներկայացուցիչները ցանկանում են տարանցիկ (շրջանցող) ճանապարհ կառուցել գյուղի մոտ, որը չի անցնի դրա միջով և կշրջանցի այն, քանի որ գյուղում խցանումները բավականին շատ են: Համայնքային իշխանության ներկայացուցիչները հանրային քննարկում են կազմակերպում, որին ներկա են բնակչության տարբեր խմբեր, որպեսզի պարզեն բնակիչների կարծիքն ու դիրքորոշումը առաջարկվող նախագծի վերաբերյալ: Հանրային քննարկման մասնակիցները բաժանվում են 5 խմբի, որից յուրաքանչյուրը ստանում է իր դերը և դիրքորոշումը նկարագրող մեկական թերթիկ: Բնակչության տարբեր խմբերն են՝ 1. **Անասնապահությամբ զբաղվող գյուղացիներ**- տարանցիկ ճանապարհը չպետք է կառուցվի, քանի որ այն անցնելու է մարգագետիններով, որտեղ գյուղացիներն արածեցնում են իրենց անասուններին: Ճանապարհի կառուցման դեպքում վերջինները կզրկվեն իրենց կենդանիներին մոտակա մարգագետնում արածեցնելու հնարավորությունից: 2. **Տեղական բիզնեսի ներկայացուցիչներ**-տարանցիկ ճանապարհը չպետք է կառուցվի, քանի որ վարորդներն այլևս չեն մտնի գյուղ, կշրջանցեն այն և չեն գնի վերջինների արտադրանքը: Տարանցիկ ճանապարհի կառուցման պատճառով տեղական բիզնեսի ներկայացուցիչները կսնանկանան:

	3. **Կենտրոնում բնակվող գյուղացիներ**- տարանցիկ ճանապարհը պետք է կառուցվի, քանի որ դրա շնորհիվ կթեթևանա գյուղի երթևեկությունը, ինչի շնորհիվ այն կդառնա անաղմուկ իսկ օդն՝ ավելի մաքուր: Տարանցիկ ճանապարհի կառուցումը կնվազեցնի գյուղում ճանապարհային խցանումները, կբարձրացնի ճանապարհային անվտանգության մակարդակը և կկանխի երթևեկության հետ կապված պատահարները: 4. **Ամենօրյա երթևեկողներ**- տարանցիկ ճանապարհը պետք է կառուցվի, քանի որ յուրաքանչյուր օր աշխատանքի գնալու համար վերջինները երթևեկում են գյուղի միջով անցնող ճանապարհով և ծախսում 45 րոպե: Իսկ տարանցիկ ճանապարհի կառուցումը կկրճատի ամենօրյա ուղևորության տևողությունը 15 րոպեով, ինչի շնորհիվ նաև կկրճատվի վառելիքի ծախսը: 5. **Համայնքային իշխանության ներկայացուցիչներ**- պետք է լսեն կողմերի դիրքորոշումները, հարցեր տան և վերջնական որոշում կայացնեն՝ կառուցել ճանապարհը, թե՞ ոչ:
Վերջնարդյունք	Մասնակիցների մոտ զարգացել են հաղորդակցման, լսելու և արդյունավետ հանրային որոշումներ կայացնելու հմտությունները՝ հաշվի առնելով հանրային շահը: Մասնակիցները գիտակցում են հանրային որոշումների կայացման գործընթացում տարբեր սոցիալ-տնտեսական շահերի հավասարակշռության անհրաժեշտությունը և մասնակցային որոշումների կայացման կարևորությունը:

«Հանրային քաղաքականության գլուխկոտրուկ»

Նպատակ	**Զարգացնել երիտասարդության՝ խնդիրներ լուծելու, քննադատական մտածողության և թիմային աշխատանքի հմտությունները՝ մշակելով քաղաքականության առաջարկ՝ ուղղված իրական մարտահրավերներին:**
Ժամանակ	50 րոպե
Մասնակիցների թիվը	Նվազագույնը՝ 6 հոգի

Անհրաժեշտ պարագաներ	Թուղթ, գրիչ
Գործողություններ	Յուրաքանչյուր խմբին տրամադրել հանրային քաղաքականության որևէ խնդիր կամ մարտահրավեր (օրինակ՝ կրթության բարելավում, գործազրկության նվազեցում, երիտասարդության քաղաքացիական ներգրավվածության խթանում): Խումբը պետք է մշակի հակիրճ քաղաքականության առաջարկ, որը ներառում է խնդրի բացահայտումը, առաջարկվող լուծումը և իրականացման քայլերը: Յուրաքանչյուր թիմ ներկայացնում է իր առաջարկը, և կոլեկտիվ քվեարկությունը որոշում է լավագույն լուծման տարբերակը: Վարժության վերջում քննարկել նման քաղաքականության իրականացման իրագործելիությունը իրական աշխարհի սցենարներում:
Վերջնարդյունք	Մասնակիցների մոտ զարգացել են վերլուծական, քննադատական մտածողության և թիմային համագործակցության հմտությունները՝ իրական համայնքային մարտահրավերների հիման վրա քաղաքականության առաջարկ մշակելով: Համատեղ որոշումներ կայացնելու շնորհիվ, երիտասարդները զարգացնում են իրենց հմտությունները՝ հիմնավորելու իրենց մոտեցումները և ձևակերպել իրագործելի առաջարկներ՝ հաշվի առնելով համայնքային համատեքստը և շահառու խմբերի կարիքները:

«Ավագանու նիստ»

Նպատակ	**Ծանոթանալ համայնքում որոշումների կայացման գործընթացին:**
Ժամանակ	60 րոպե
Մասնակիցների թիվը	5-25 հոգի
Անհրաժեշտ պարագաներ	Գրիչներ, մարկերներ, թղթեր, ֆլիպչարթներ, ավագանու որոշման նախագծի ձևանմուշներ

Գործողություններ	Առաջարկեք մասնակիցներին բաժանվել 4-5 հոգանոց խմբերի՝ կախված մասնակիցների ընդհանուր թվից: Խմբերին ներկայացրեք տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության բնագավառները: Առաջարկեք մասնակիցներին ընտրել մեկ բնագավառի որևէ հիմնախնդիր, որն առկա է իրենց համայնքում: Խմբերից յուրաքանչյուրը, ելնելով իրենց համայնքի ռեսուրսներից ու հնարավորություններից, պետք է տվյալ հիմնախնդրի լուծման վերաբերյալ մշակի համայնքի ավագանու որոշման նախագիծ, դրա հիմնավորումը և ծախսերի ավելացումը կամ եկամուտների նվազեցումը այդ նախագիծը ընդունելու դեպքում: Այնուհետև, յուրաքանչյուր խումբ բանավոր քննարկում և ներկայացնում է իր որոշման նախագիծը, որից հետո բոլոր խմբերի մասնակիցները քվեարկում են տվյալ որոշման նախագծի ընդունման համար՝ կողմ, դեմ կամ ձեռնպահ: Վերջում վարժության արդյունքները վերլուծվում, ամփոփվում են և արվում են համապատասխան եզրահանգումներ: Վարժության կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ է մասնակիցների յուրաքանչյուր խմբին տրամադրել ավագանու որոշման նախագծի կազմման դատարկ ձևանմուշներ:
Վերջնարդյունք	Մասնակիցների մոտ զարգացել են միմյանց լսելու և հաղորդակցվելու ունակությունները, համայնքային նշանակության խնդիրների լուծմանն ուղղված որոշումներ մշակելու, արդյունավետ համայնքային որոշումներ կայացնելու և հստակ ձևաթղթերով աշխատելու հմտությունները:

«Նախընտրական քարոզարշավ»

Նպատակ	**Բացահայտել մասնակիցների խնդիրներին լուծումներ տալու, կոլեկտիվ որոշումներ կայացնելու կարողությունները:**
Ժամանակ	60 րոպե
Մասնակիցների թիվը	15-30 հոգի
Անհրաժեշտ պարագաներ	Թղթեր, գրիչներ, ֆլիպչարտներ, մարկերներ

Գործողություններ	Ընտրել 6 մասնակցի, կազմավորել 2 խումբ 3 հոգուց բաղկացած: Այդ խմբերը կլինեն 2 կուսակցությունների անդամներ, որոնք առաջադրվել են ավագանու ընտրություններին՝ որպես թեկնածուներ: Մյուս մասնակիցներից յուրաքանչյուրին խնդրել թղթի վրա գրել իրենց համայնքում կամ մտացածին համայնքում առկա խնդիր: Թղթերը փակ վիճակում հավաքել, խառնել և հավասար բաժանել կուսակցությունների միջև: Յուրաքանչյուր կուսակցությանը տալ 15 րոպե ժամանակ ուսումնասիրելու առկա խնդիրները և ներկայացնելու կուսակցության կողմից առաջարկվող լուծումները: Ապա յուրաքանչյուր կուսակցություն ներկայացնում է իր լուծումները վերհանված խնդիրների վերաբերյալ: Ընդ որում, որոշ դեպքերում նույն խնդիրը կարող է ձևակերպված լինել երկու կուսակցություններին բաժին ընկած թղթերում: Այդ տեսանկյունից հետաքրքիր է հասկանալ նույն խնդրին տարբեր կուսակցությունների կողմից առաջարկված լուծումները: Վերջում խնդիրներ առաջարկած մասնակիցները քվեարկության միջոցով կընտրեն հաղթող կուսակցությանը՝ առաջնորդվելով ձևակերպված խնդիրներին կուսակցությունների առաջարկած լուծումներով:
Վերջնարդյունք	Մասնակիցների մոտ զարգացել են համայնքային նշանակության խնդիրները բացահայտելու և դրանց լուծմանն ուղղված ծրագրեր մշակելու ունակությունները: Մասնակիցները ձեռք են բերել փաստարկված և համոզիչ բանախոսելու ունակություններ:

«Երիտասարդական խորհրդարան»

Նպատակ	**Երիտասարդներին ծանոթացնել օրենսդրական գործընթացներին, հրապարակային ելույթներին և ժողովրդավարական որոշումների կայացմանը՝ խորհրդարանական բանավեճի միջոցով:**
Ժամանակ	60 - 120 րոպե
Մասնակիցների թիվը	Նվազագույնը՝ 15 հոգի

Անհրաժեշտ պարագաներ	Նախապես պատրաստված բանավեճի թեմաներ, անունների պիտակներ (օր.՝ խոսնակ, նախարար, ընդդիմություն, քաղաքացիներ)
Գործողություններ	Մասնակիցներին նշանակել այնպիսի դերերում, ինչպիսիք են կառավարության պաշտոնյաները, ընդդիմության անդամները և քաղաքացիները: Ներկայացնել քաղաքականության առաջարկ (օրինակ՝ քվեարկության տարիքի իջեցում, կառավարությունում երիտասարդների քվոտաների կիրառում, կլիմայի քաղաքականություն): Թույլ տալ յուրաքանչյուր կողմին նախապատրաստել առաջարկին կողմ և դեմ փաստարկներ: Իրականացնել կառուցվածքային բանավեճ միմյանց հետ: Անցկացնել վերջնական քվեարկություն՝ որոշելու, թե արդյոք քաղաքականությունն ընդունվել է, թե՝ ոչ: Քննարկել, թե ինչպես են գործում իրական խորհրդարանները և ինչպես կարող են երիտասարդները ներգրավվել օրենսդրական բարելավումների և փոփոխությունների գործընթացներում:
Վերջնարդյունք	Մասնակիցների մոտ զարգացել են փաստարկված խոսքի, բանավիճելու և լսելու հմտությունները՝ միաժամանակ խորացնելով մասնակցության կարևորության գիտակցումը որոշումների կայացման գործընթացներում: Երիտասարդները ձեռք են բերում հիմնարար գիտելիքներ օրենսդրական գործընթացների, ժողովրդավարական կառավարման մեխանիզմների և հրապարակային ելույթների վերաբերյալ:

ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ

1. ՀՀ Սահմանադրություն, 2015
2. Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա, 1985
3. Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի ՏԻՄ-երի գործերին մասնակցելու իրավունքի վերաբերյալ լրացուցիչ արձանագրություն, 2013
4. ՀՀ ընտրական օրենսգիրք, 2016
5. «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենք, 2001
6. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, 2018
7. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, 2002
8. «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենք, 2018
9. ՀՀ կառավարության 10.10.2018թ. «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու և ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 25-ի n 296-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1146-Ն որոշում
10. ՀՀ կառավարության 02.11.2023թ. «ՀՀ համայնքներում մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 1890 որոշում
11. «Ավագանու կանոնակարգը հաստատելու մասին» ավագանու որոշումներ
12. «Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը» հաստատելու մասին ավագանու որոշումներ
13. «Համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին» ավագանու որոշումներ
14. «Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ավագանու որոշումներ
15. ՀՀ համայնքի ավագանու օրինակելի կանոնակարգ (համամասնական ընտրակարգով ընտրված ավագանու համար), 2024
16. «Համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգի» օրինակելի ձևանմուշ
17. «Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգի» օրինակելի ձևանմուշ
18. Համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնության կազմակերպման և իրականացման ուղեցույց, 2017
19. Համայնքներում մասնակցային բյուջետավորման ընթացակարգերի վերաբերյալ մեթոդական ուղեցույց
20. Council of Europe. 2015. Have Your Say! - Manual on the Revised European Charter on the Participation of Young People in Local and Regional Life (New Edition).

21. The European Commission. 2020. Models of Youth Participation Handbook. https://bepart-project.eu/wp-content/uploads/2021/03/Models-of-Youth-Participation-Handbook.pdf
22. The Guide Association. 2019. Youth participation: decision-making activities for trainers. https://www.girlguiding.org.uk/globalassets/docs-and-resources/learning-and-development/youth-participation-decision-making-activities.pdf